


Գործարար ГОРЦАРАР

ЯНВАРЬ-МАРТ № 1-3 (165-167) 2013 г.


Հզոր ու գեղեցիկ է Արցախն այսօր

Հարցազրույց ֆրանսիահայ լուսանկարիչ Գրիգոր Խաչատրյանի հետ, ով մասնակցել է Ղարաբաղյան շարժման 25-ամյակի կապակցությամբ կազմակերպված ցուցահանդեսին:



– Հայաստանում չեք բնակվում, բայց Ձեր աշխատանքների մեծ մասը Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին է նվիրված:

– Այո, հիմա Հայաստանում չեմ բնակվում: 2011թ. Ֆրանսիայից առաջարկ ստացա: Հիմա ապրում ու աշխատում եմ Ֆրանսիայում: Երբ 12 տարեկան էի, տեսածս լուսանկարների միջոցով ցույց տալու գաղափար առաջացավ: Ես ծնունդով սյունեցի եմ: Փոքր ժամանակ սիրում էի պապիս հետ անտառներովման գալ: Պապս իմ մեջ սերմանեց սերը բնության հանդեպ: Ինձ թվում էր, որ անարդար է, երբ գեղեցկությունը տեսնում եմ միայն ես, իսկ պատկերացրեք՝ քանի միլիարդ մարդ է ապրում երկրագնդի վրա: Եվ որպեսզի մարդկանց ցույց տամ այն գեղեցկությունը, որը տեսնում են իմ աչքերը, ես խնդրեցի ինձ համար լուսանկարչական ապարատ գնել: Հետագայում լուսանկարչությունն իմ ձեռքին դարձավ մի հզոր գործիք, որի միջոցով փորձում եմ պահպանել իմ հայրենիքը: Տեսախցիկս իմ ուժեղ և հավատարիմ դաշնակիցն է, իսկ լուսանկարչությունն իմ ձեռքին մի հզոր գործիք է, որի միջոցով փորձում եմ պահպանել ու տարածել մեր պատմական արժեքները: Ամարաս, Գանձասար, Դադիվանք, Ավետարանոց, Տիգրանակերտ և այլն: Հզոր ու գեղեցիկ է Արցախն այսօր, ահա այս խորագրով էլ ներկայացրինք Արցախ աշխարհը հանրությանը: Արցախի մասին խոսելիս կարող եմ ասել, որ այն, չնայած միջոցների սղությանը, կարողացել է պահպանել իր մշակութային ժառանգությունը:



– Համագործակցո՞ւմ եք Հայաստանի կամ Ֆրանսիայի լուսանկարիչների հետ:

- Հայաստանում շատ լուսանկարիչ ծանոթներ ունեմ, բայց համագործակցություններ կամ նման ծրագրեր դեռ չկան: Այստեղ՝ Ֆրանսիայում, համագործակցում եմ [illegible] լուսանկարիչների, ասոցիացիաների հետ:

- Ֆրանսիայի հայ համայնքի հետ համատեղ ջանքերով Արցախյան շարժման 25-ամյակին նվիրված ցուցահանդես էիք կազմակերպել, [illegible] արձագանք ստացավ, արդյո՞ք դա առաջին [illegible]նատիպ նախաձեռնությունն էր:

– Սա Արցախին նվիրված իմ առաջին ցուցահանդեսն էր: Արցախ աշխարհի գեղեցկությունը հանրությանը ցույց տալն էլ դարձավ մեր ցուցահանդեսի հիմքը: Ցուցահանդեսը հիմնականում ճանաչողական բնույթ է կրում: Փորձել ենք Արցախը ներկայացնել գրեթե ամբողջությամբ՝ պատմամշակութային արժեքներ, եկեղեցիներ, բնություն, սովորական արցախցու առօրյա կյանք: Այն մեծ ոգևորությամբ ընդունվեց թե՛ հայերի, թե՛ ֆրանսիացիների և այլ ազգերի կողմից: Լուսանկարները [illegible] նայելով, նրանք նաև հետաքրքրվում էին Արցախի պատմությամբ: Նշեմ, որ ցուցահանդեսը կրելու է շարունակական բնույթ: Հետագայում այն նաև ցուցադրվելու է Ֆրանսիայի մի քանի քաղաքներում: [illegible] մինչ այդ ապրիլի 24-ին, նախատեսում ե[illegible] կազմակերպել Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված ցուցահանդես: Ուզում եմ առանձնահատուկ շնորհակալություն հայտնել Հայոց ցեղասպանության թանգարանի տնօրեն Հայկ Դեմոյանին մեզ լուսանկարներ տրամադրելու համար:


Միդա ՂԱՐԻԲՅԱՆ




























ՀՈԳՈՒՍ ՃԻՉԸ

Առանց հայրենիքի, առանց հարազատ հողի հետ սերտ կապի, մարդ չի կարող գտնել իրեն, իր հոգին:

Մարտիրոս ՍԱՐՅԱՆ

Մամուլում և հեռուստատեսային հաղորդումներում հաճախ լսում եմ իշխանավորների, երկրի ղեկավարների ելույթներ, մեկնաբանություններ, որոնցում արդարացվում է հայերի Հայաստանից հեռանալու և օտար երկրներում գոյություն պահպանելու փաստը:

Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ այդ մարդիկ անտեսում են ազգային հոգևոր գաղափարներն ու մեր գանձերը սրբազան: Հիշեք, որ երկրում էլ լինեք, կյանքն ակնթարթ է:

Մի՛ հեռացեք հայոց սուրբ հողից: Չէ որ այն Ձերն է, ձեր պապերի ու ժառանգների միջոցով է երկիր դարձել: Մի՛ թողեք ձեր երկիրն ուրիշներին, մի հավատացեք քաղաքական կեղծ ու արհեստական կուսակցությունների խարդախություններին: Մնացե՛ք ձեր հայրենիքում, տեր կանգնեք ձեր պապերի արյունով ստեղծված երկրին ու հողին: Պայքարե՛ք արդարության, ազնվության և ձեր իրավունքների համար: Մի՛ խուսափեք հերոսական քայլերից: Այս դառը իրականության մեջ փորձեք պայքարել ճշմարտության և սկզբունքայնության համար:

Հիսուն տարի շարունակ եղել եմ Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներում ու գյուղերում, հանդիպել ու զրուցել տարբեր մասնագիտությունների տեր հազարավոր մարդկանց հետ, գրել հազարավոր հոդվածներ նրանց հայրենասիրական գործունեության և մարդկային արժանիքների մասին: Որպես լրագրող այսօր նա չեմ դադարել նույն գործը շարունակելուց: Բայց սիրտս թախծում է լցվում, երբ հանդիպում եմ կյանքից դժգոհ, սեփական հողատարածքից հոգնած, անիմաստ կյանքով ապրող, անգործունյա մարդկանց: Ցավ եմ ապրում հատկապես տաղանդավոր մարդկանց, երիտասարդ մասնագետների՝ «երկնային դրախտ» որոնողների համար:

Աշխարհի տարբեր քաղաքներում Հայաստանի կրթության և գիտության դիպլոմները գրպանում հայ մարդը աղերսներով աշխատանք գտնելու է գնում: Մասնագետը համաձայն է աշխատել մատուցող, հավաքարար, փողոց մաքրող, միայն թե աշխատանք ունենա: Նման սահմռկեցուցիչ դեպքերի եմ հանդիպել աշխարհի տարբեր քաղաքներում: Նայել եմ հայի թախծոտ աչքերին ու հեռացել:

Մեր ճակատագիրը շատ ծանր է, մեր մեջքը խորտակվեց և երկրե-երկիր ընկանք: Ժամանակն է, որ խորհենք, իրար հասկանանք: Արագիլները չվելուց առաջ նույնիսկ կանգնում են մեկ ոտքի վրա, նայում իրենց կառուցած բնին ու նոր հեռանում, թռչում են՝ չքանդելով իրենց կառուցածը՝ օրերից մի օր այն պետք է գալու:

Փորձենք ամրանալ հողին, պայքարենք խաղաղությամբ, պատժենք չարերին: Դուք հայրենիքին եք պետք, գաղթաշխարհը ձերը չէ: Մի լքեք երկրի արևը, հողը, ջուրը, օդը, ձեր անցյալն ու ներկան: Դուք եք երկրի տերը, պայքարեք ձեր իրավունքների համար: Հայրենիքը ձեզ տվել է լեզու, գեղեցկություն, ճշմարտություն, ցանուցիր մի դարձրեք այն:

Հոգնած ու մաշված գրիչս փորձում է սիրալիր տոնով մեղմել ոմանց գայլային



ախորժակը, շատերի լկտի գործելակերպը:

Հայ գյուղացուն մնաց տառապալից մի կյանք, որ նորից հնչեցնի Թումանյանի տողերը.

Դարձել է ախպեր, աշխարհը առ ու փախ,
Սերը դարձել սուր ու ջուրը՝ արին,
Ոչ ամոթ ունի ուժեղը, ոչ ահ,
Վայը եկել է, տարել տկարին…

Ամոթն ու ահը կորցնելու չափն անչափելի է դարձել, չափը կորել է, չափելու տեղ չի մնացել:

Հայաստանից հեռանալու բազմաթիվ պատճառներից մեկն էլ այն է, որ մարդիկ իրենց ապրելու և կենսագործունեության պայմանները բարելավելու նպատակով ստիպված թողնում հեռանում են հայրենիքից, որպեսզի ոչ միայն իրենք գոյատևեն, այլև օտար երկրներում մեծ դժվարություններով ձեռք բերված վաստակի մասն ուղարկեն հայրենիք՝ պահպանելու ընտանիքի մյուս անդամների գոյությունը, ինչպես նաև, եթե հնարավոր է, հայրենիքից հեռու պայմաններ ստեղծել իրենց մոտ տեղափոխելու հարազատներին: Այլ խոսքով, մարդկանց հայրենիքից հեռացումը հիմնականում կապված է աշխատանքի և կյանքի լավագույն պայմանների որոնման հետ:

Աշխատանքի որոնման արդյունքում տեղի են ունենում անվերադարձելի և անօրինական բազմաթիվ երևույթներ, որտեղ տուժում է ոչ միայն անհատը, այլև ազգը: Հեռացողների թիվը շարունակ մեծանում է:

Հոգեբանական կորուստն ավելի մեծ է, քան տնտեսական շահը: Հայաստանում հասարակությունը ծերանում է, բնակչության թվաքանակը նվազում:

Այսպես, խախտվում է պետության կառուցվածքային հիմքը, բնակչության ծնելիության գործակիցը նվազում է: Ազգային անկումներ են գրանցվում այլ ոլորտներում:

Նախկին խորհրդային կարգերի դռներն ու պատուհանները բացվեցին, որի հետևանքով էլ փոխվեց մարդկանց վարքագիծը, ձևավորվեց սոցիալական, տնտեսական ծանր և անվերջանալի շրջան: Մարդկանց մեջ առաջացավ լարվածություն:

Մարդիկ չեն գնահատվում իրենց ընդունակությունների և կատարած աշխատանքի համար և վիրավորված հեռանում են հայրենիքից: Անձը հեռանում է հայրենի հողից՝ մոռանալով իր անցյալն ու հայրենիքի սերը: Հեռանալով երկրից, մարդիկ կորցնում են իրենց կյանքի ողջ ձեռքբերածը, ընտանիքի վարքագիծը:

Հայաստանում տեղի ունեցող եկամուտների բաշխման խիստ անհավասարությունը մարդկանց հասցնում է զրկանքի, որն էլ դառնում է հեռացման պատճառ: Հայերը դարձել են շարժունակ բնակչություն:

Գաղթական դառնալու վարքը հայերն ավելի շատ ձեռք բերեցին վերջին քսան տարիների իշխանությունների գործունեության հետևանքով: Եվ այսպես շարունակ ընդարձակվում են կապերն արտասահմանում ապրող ազգականների հետ և ստիպված գաղթում են:

Հայաստանից արտագաղթում են ոչ միայն բանվորներն ու արհեստավորները, այլև բարձր որակավորում ունեցող մասնագետները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ բարձր որակավորում ունեցող մասնագետներն արտասահմանում աշխատանքի են անցնում առավել շահավետ պայմաններով:

Բազմաթիվ մարդիկ արտագաղթում են՝ ելնելով նյութական շահից: Յուրաքանչյուր արտագաղթող ունի իրեն բնորոշ շարժառիթը և սեփական փորձը: Մարդիկ, իհարկե, գանկանում են խուսափել աղքատությունից, բայց ոչ բոլոր աղքատներն են արտագաղթում: Այս հարցի վերաբերյալ մոտեցումները երկուսն են՝ անհատական և կառուցվածքային: Անհատական մոտեցումը դիտվում է որպես յուրաքանչյուր էակի բնական խնդիր: Մյուս մասը (ով հնարավորություն ունի) ձգտում է այն տարբերակին, որի դեպքում առաջարկվում է ամենաբարձր աշխատավարձը և աշխատանքի լավագույն պայմանները: Դա ընդունվում է որպես «մարդկային կապիտալի» նկատմամբ մոտեցում:

Այսպես, ինչպես կապիտալը տառապում է աշխարհով ներդրվելու լավագույն տարբերակի փնտրտուքով, այնպես էլ բարձր մասնագիտացում ունեցող անհատներն էլ ձգտում են այնտեղ, որտեղ հնարավոր է ստանալ բավարար եկամուտ՝ օգտվելով «մարդկային կապիտալից»:

Սոցիալ-տնտեսական իրավիճակն առաջին հերթին առաջացնում է «ուղեղների արտահոսք»: Երկիրը կորցնում է կրթված և որակավորում ունեցող աշխատողներին, ինչը տանում է երկրի ներուժի թուլացմանը:

Հայաստանը կորցնում է աշխատունակ տարիքում գտնվող մարդկանց մի մասը, կորցնում է այն միջոցները, որոնք ծախսվել են աշխատունակ մարդկանց կրթության և մասնագիտական պատրաստման վրա:

Այն մասնագետները, ովքեր դուրս են գալիս երկրից, խիստ անհրաժեշտ են ազգային տնտեսության տարբեր ոլորտների զարգացման համար:

Դատարկվում են գյուղերը լեռնային, դատարկվում են կարիքից: Հույս ու հավատ չմնաց, կործանվում են ապագայի վառ հույսերը:

Մնացե՛ք Հայաստանում, փորձեք գտնել ձեր իրավունքներն ու ձայնի արժեքը: Հիշեք, որ ձեր հեռանալով կործանում եք մնացողների և ողջ ազգի գոյության հեռանկարը: Դուք հեռանում եք երկրից և մնացողների վրա բարդում երկրի ամբողջ պարտքը:

Մնացե՛ք այստեղ, մեզ հետ կրեք ազգային հոգսերը:

Ռոբերտ ԴԱՎԹՅԱՆ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԸ ՖԵԼԻԵՏՈՆԻՍՏ

Երգիծանքը գրականության անբաժանելի տարրն է. այն, իբրև իրականությունը գեղարվեստորեն վերարտադրելու ձևերից մեկը, իր սկիզբն առնում է հնագույն անցյալից: Ինչպես որ ծիծաղն անբաժան է մարդկային կյանքից, այնպես էլ երգիծանքն անբաժան է գրականությունից, արվեստից ու մամուլից: Հայտնի է, որ գրական ամեն մի ժանր սոցիալական որոշ դեր է կատարում: Երգիծանքի էությունը ոչ միայն ծիծաղ առաջացնելու, այլև կյանքի որոշ երևույթներ քննադատելու, խարազանելու և դրա միջոցով մարդկային թերությունները վերացնելու մեջ է: Այդ հատկության շնորհիվ երգիծանքը ծառայել է և ծառայում է որպես թերությունների դեմ պայքարի սուր զենք:


Հայ մամուլի և գրականության ոլորտներում երգիծանքն այն հնչուն լարն է, որը զգալի տեղ գրավեց Եղիշե Չարենցի, Դերենիկ Դեմիրճյանի, Ստեփան Զորյանի, Արազու, Ակսել Բակունցի, Նաիրի Զարյանի, Մահարու և ուրիշների երկերում:

Դերենիկ Դեմիրճյանի անվան հետ է կապված հայ երգիծաբանության ամենափայլուն էջերից մեկը: Դեմիրճյանն արևելահայ իրականության մեծ երգիծաբաններից է: Հայ գրականության մեջ, որպես երգիծաբան, Դեմիրճյանը Հ. Պարոնյանի նման որդեգրեց հատկապես մերկացնող կծու ծաղրը: Որքան էլ գեղարվեստական առումով երբեմն անհամատեղելի և ժանրային պատկանելիությամբ իրարից հեռու, Դեմիրճյանի երգիծական ստեղծագործությունները՝ ֆելիետոնները, երգիծական պատմվածքներն ու զրույցները, երգիծական չափածո խոսքը, կատակերգությունները, անավարտ մի վեպ, կապված են իրականության հետ:

1920-ական թվականներին Դեմիրճյանը զարգացրեց երգիծանքի՝ ֆելիետոնի տեսակը: Ֆելիետոնն իր բովանդակությունը ստանում է օրվա անմիջական խնդիրներից՝ ընդգրկելով կոնկրետ փաստեր, հանդես բերելով կոնկրետ անձնավորություններ, հիմնարկներ, կազմակերպություններ:

Ֆելիետոնի, իբրև, ժանրի, հատկանշական գիծը ծաղրն է: Առաջ գալով հրապարակախոսության պահանջներից, ֆելիետոնը շարունակեց մինչև վերջ կապված մնալ հրապարակախոսության հետ՝ միջին տեղը գրավելով հրապարակախոսության և գեղարվեստական գրականության արանքում: Դեմիրճյանը որպես ֆելիետոնիստ միշտ որոնել ու հայտնաբերել է երգիծելին և դրանով իսկ ընդարձակել երգիծականի սահմանները, թարմացրել երգիծանքի առարկան: Նրա մոտ բացակայում է երգիծանքի օբյեկտի ձանձրալի միօրինակությունը:

Դեմիրճյան-ֆելիետոնիստի մոտ նույնիսկ ամենաաննշան կենցաղային թեման դառնում է կարևոր արժեք ունեցող խնդրի արծարծում: Հենց ֆելիետոնի մասին Դեմիրճյանի գրվածքը՝ «Անգործ ֆելիետոնիստ»-ը բավականին խոր միտք է արտահայտում և հետաքրքիր փաստ է հաղորդում՝ գեղարվեստական միջոցներով: Ֆելիետոնիստը, պարապությունից և որևէ գործ ճարելու մտքից դրդված նստում է Գետարչայի ափին, նայում է ալիքներին և



ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ-135

հանկարծ զգում է, որ ինքն ու գետն իրար հասկանում են: Այսինքն՝ երկուսն էլ անգործ են: Սկսում են զրուցել մարդկային լեզվով: Գետն ասում է, որ Երևան է շտապում և մի կարգին հուն չունի. «Բավական դեղագործություն սովորեցի հիվանդանոցների պահեստներում, ծանոթացա Րաֆֆու և Նալբանդյանի գրվածքներին, ուսումնասիրեցի պահեստի գործը պադվալներում, շատ բան տեսա, իմացա»: Գետարչայը ֆելիետոնիստից տեղեկանում է, որ իր արածը «բանդիտիզմ է», քանի դեռ բետոնե հունի մեջ չէ: «Եպիսկոպոսի միրուքը» ֆելիետոնում երգիծանքը տեղի է ունենում համեմատության միջոցով: Պատկերում է ամուսինների, որոնք հայելու մասին տեղեկություն չունեն: Եվ մի օր պատահականորեն ամուսինը գտնում է մի հայելու կտոր և բերում է տուն ու պահում բարձի տակ: Երբ կինը տեսնում է հայելին, չիմանալով, թե դա ինչ բան է, սկսում է խանդել ամուսնուն, իսկ, երբ ամուսինն է նայում, տղամարդու պատկեր տեսնելով, ինքը խանդից զայրացած գոռգոռում է: «Ճարահատված տանում են տերտերի մոտ: Տերտեր ջան, մի մտիկ տուր, ասա՝ էս ինչ առակ է: Տերտերն ուշի ուշով նայում է հայելու մեջ և հարցը լուծում. – Սա ոչ կնիկ է, ոչ տղամարդ և ուրիշ բան. սա ինձ ձեռնադրող եպիսկոպոսն է: Տեսեք մորուքը»: Այս զվարճալի միամիտ պատմության միջոցով Դեմիրճյանը բացատրում է ավելի կարևոր գաղափար՝ տարբեր մարդկանց հետ խոսելու ժամանակ, որոշակի հարց ու փորձից հետո Դեմիրճյանը գալիս է այն եզրակացության, որ յուրաքանչյուրը խոսում է ըստ իր «միրուքի», այսինքն՝ իր հարմարությունից ելնելով: «Այսպես, անցյալ օրը մի շատ հարգելի բարեկամի հարց տվեցի, թե ինչպես է գտնում նա մեր երկրի դրությունը: Նա հաստատուն շեշտելով պատասխանեց. «Շատ վատ: Եվ ասեմ՝ ինչու: Նախ՝ ...»: Եվ շարունակում է իր տրտունջը և անհամաձայնությունը ամեն ինչում:

Դեմիրճյանին հուզող հարցերը շատ էին: Ելնելով ժամանակի բարդ ու դժվարին իրադրությունից, հենց սկզբից նա բռնեց մարտական ուղին՝ թե գրականության և թե հրապարակախոսության մեջ: Նրա հրապարակախոսության պաթոսն արտահայտվում է գեղարվեստական արտացոլման տարբեր երանգներով: Հատկապես երգիծանքի ժանրը նրա մոտ հասնում է բարձրագույնի: Նա երգիծում էր, հեգնում, ծիծաղում, դատապարտում: Բոլոր դեպքում՝ նա անկեղծ պաթոս, հրապարակախոսական մեծ շունչ էր դնում իր երգիծական ստեղծագործությունների մեջ և դրանով արժանանում բարձր գնահատականի, հասարակության լայն խավերի ընդունելությանը: Քսանական թվականների մամուլը բարձր գնահատեց նրա ֆելիետոնները: Այդ ֆելիետոններում նա առանձնապես զարկ տվեց կենցաղային և սոցիալական երգիծանքին ծաղրեց կենցաղի թերությունները, մարդկանց շողոքորթություններն ու կեղծիքը:

1926 թ. փետրվարի 10-ին «Խորհրդային Հայաստանում» տպագրված «Ճառընտիր» – շարքից» ֆելիետոնում Դեմիրճյանը բարձրացնում է մի կարևոր ու հուզող հարց: Գյուղացու հետ խոսել գյուղացու պարզ լեզվով, ոչ թե ճոռոմ-ճարտասանական ելույթներով բթացնել ու քնեցնել գյուղացուն ժողովներում: Որքան պարզ լինի լեզուն, այնքան ավելի լավ կըմբռնի գյուղացին:

Դ. Դեմիրճյանի գրիչը դիպուկ էր, երբեք չի շեղվել իր հավատամքից և շարունակում էր նվիրված մնալ իր սկզբունքներին: Նա միշտ մարտական դիրքերում էր, միշտ պատրաստ՝ ծառայելու ժողովրդին:

Վ. Գ. Բելինսկին հաստատելով գրողի՝ հասարակական երևույթները բացասական կողմերով վերարտադրելու իրավունքը, գրել է «Մ՝ատնանշել հասարակության իսկական թերությունը, նշանակում է՝ նրան ծառայություն մատուցել, նշանակում է՝ նրան փրկել թերությունից»: Այնուհետև ավելացնում է. «Տաղանդն ունի միակողմանի լինելու լրիվ և սրբազան իրավունք, և այն կարող է մեծ լինել հենց միակողմանիության մեջ»:

Դերենիկ Դեմիրճյանը իբրև երգիծաբան, ֆելիետոնիստ հարուստ ու բազմաբնույթ գրական ժառանգություն է թողել: Որպես ֆելիետոնիստ, Դեմիրճյանը հայ գրականության ամենախոշոր ներկայացուցիչներից մեկն է: Նրա ֆելիետոններում և ընդհանրապես երգիծական ստեղծագործություններում, մանրապատումներում պատկերված կերպարները չափազանց հարուստ ու բազմազան են: Նրա երգիծական ստեղծագործություններում արտացոլվել է մի ամբողջ ժամանակաշրջան իր սոցիալ-քաղաքական, ընտանեկան-կենցաղային բազմաբնույթ հարցերով, որոնցում հեղինակը միշտ պաշտպանել է ժողովրդի շահերն ու ձգտումները: Իր

→5

4Ɔ

ֆելիետոններում նա միշտ մաքառել է հնացած, հետադիմական հայացքների դեմ՝ ղեկավարվելով բարձր մարդասիրությամբ:

Դերենիկ Դեմիրճյանը մեծ երգիծաբան է, ճշմարտության ու արդարության դրոշակակիր: Նա միշտ էլ իր հոգեկան բավականությունը գտել է հակառակի հոսանքին դեմ գնալու մեջ: Հետաքրքրական կամ շլացնող սյուժեներ չէ, որ նա որոնել է կյանքում: Նրա նպատակը եղել է մի բան՝ օգնել մարդուն ճանաչելու կյանքն ու իրականությունը, գտնելու իր շիտակ ճանապարհը, ճանաչելու իր թշնամուն, կամ թե ուղղելու սեփական մոլորությունները:

Հատկապես կոլեկտիվացման շրջանի և երկրի սոցիալիստական վերակառուցման տարիներին նրա գրած ֆելիետոնները մնում են որպես երգիծանքի գեղեցիկ նմուշներ: Դեմիրճյանը միշտ հավատարիմ է մնացել համաշխարհային դասական երգիծաբանության լավագույն ավանդույթներին: Դեմիրճյանը միշտ էլ եղել է մարտնչողի դերում: Նա լավ էր հասկանում, թե ում դեմ և ում համար է կռվում:

Իբրև հրապարակախոս-երգիծաբան, նա ձգտում էր օգնել ընթերցողին իրականության մասին ճիշտ տեսակետ ունենալու, չարիքի մեջ մինչև արմատները թափանցելու և նրա դեմ զինվելու: Նրա երգիծական կերպարները չոր ու ցամաք սխեմաներ չեն, այլ կենդանի, գույն ու երանգ ունեցող անձնավորություններ: Լինելով նուրբ հոգեբան և միաժամանակ ռեալիզմի մեծ վարպետ, Դեմիրճյանը օժտված էր դիտելու, զննելու հազվագյուտ ունակությամբ: Ժամանակակիցների բնորոշմամբ Դեմիրճյանը եղել է սրամիտ, ունեցել է իմաստավորված միտք: Ավետիք Իսահակյանի ծննդյան 69-ամյակի օրը ելույթ է ունեցել նաև Դ. Դեմիրճյանը: Այդ առիթով Համազասպ Համբարձումյանը գրում է. «Դեմիրճյանը խոսում էր սրամտորեն, պատկերավոր՝ ձգտելով իր խոսքին տալ իմաստասիրական բնույթ: Նա խելոք էր, կարող էր մտածել: Նրա հիմնական թերությունը թաքուն ինքնավստահությունն էր: Նրա միտքը որոնող էր և ստեղծագործող»:

Ավետիք Իսահակյանի կարծիքով Դեմիրճյանը անմիջական և սրամիտ մարդ էր: «Որևէ մեկի հետ զրուցելիս կլռեր, – ասում է նա, – և հետո միայն նրա ասածներից գրի կառներ ու մտքեր կհավաքեր»:

Դ. Դեմիրճյանի երգիծանքի ամենամեծ փաստը ճշմարտախոսությունն է: Նրա երգիծանքի մեջ կա ոճի զարմանալի պարզություն և ինքնատիպություն: Դեմիրճյանը, որպես երգիծանքի վարպետ, ծիծաղելի միտքը զգեստավորում է արտահայտչական համապատասխան հանդերձանքով:

Բերենք մի երկու հատված տարբեր ֆելիետոններից.

«Եվ լավ, որ նայում ես՝ տեսնում ես՝ յուրաքանչյուր գող իր գործունեությամբ ըստ չափու կարողության յուրովսանն աշխատելով սովետական քանդարարության վերելքում՝ գցում է իր համեստ լուման այս ասպարեզում և իր հերթին առաջադիմում է համապատասխան բնագավառում: («Միլիցիան և իր թշնամիները»):

«Այո՛, այո՛, այո՛, ո՛չ թե ավտոմոբիլներ, ո՛չ թե աերոպլաններ, այլ ոսկի սինիներ, ադամանդական մատուցարաններ շինենք աղբի համար, փիրուզե սափորներ, մարգարտե կառքեր ընդելուզենք, հրեղեն ձիեր լծենք աղբի համար, հրաժեշտի խանդավառ հանդեսներ տանք, փող հարենք թմբուկ զարկենք, Դավիթ Մարգարեի պես պարենք, երգենք ու ճամփա դնենք քաղաքից հեռացող աղբին» («Աղբը և իր հեղինակ»):

Դժվար չէ նկատել այս երկու հատվածների երգիծական ուղղվածությունը, որը հիմնված է առհասարակ երգիծանքին հատուկ հակադրության սկզբունքի վրա: Այս երկու հատվածներում էլ, որտեղ կա թե՛ քաղաքական, և թե՛ կենցաղային թեմա՝ բարձր գրական արտահայտչաձևերով երևում է երգիծանքի ազդեցության ուժը:

Դեմիրճյանն իր մի շարք երգիծական ստեղծագործություններում սուր ծաղրի էր ենթարկում պետական ապարատը սողոսկած ձևամոլության այն շորշոփը, որ ժամանակին այնպիսի ուժով խարազանում էր Վլ. Մայակովսկին:

Չերնիշևսկին երգիծանքը համարում է քննադատության ծայրահեղությունը: «Երգիծական ուղղությունը տարբերվում է քննադատականից, իբրև, նրա ծայրահեղությունը, որն անհոգ է պատկերների օբյեկտիվության ու տեղ գտած ծաղրի նկատմամբ և թույլ է տալիս չափազանցություններ»: Դեմիրճյանը քաղաքացիական պարտքի լիակատար գիտակցությամբ էր դիմում երգիծանքին: Նրա «Երգիծանք» շարքի հարյուրից ավելի ստեղծագործություններում պարզ երևում է հեղինակի հրապարակախոսական շունչը: Ահա այդ շարքի առաջին պատմվածքը՝ «Համառոտ անմահներ և հավերժական մահկանացուներ»: Պատմվածքի հերոսը՝ Սաշան «հավան չի իր ընկեր Գալուստի քաղաքական մեթոդին», քանի որ «կպել է հին ասիական մեթոդի պոչից» ու «չկարողացավ եվրոպացի դառնալ»: Ի՞նչ է հասկանում Սաշան «եվրոպացի դառնալ» ասելով: Գողանալ, խարդախություն անել, միայն թե հասնել նպատակին: Սա անգլիական մեթոդն է: Սաշան դեմ չէ նաև ամերիկյան մեթոդին, որի համաձայն «մարդը գողանում է, գողանում ու մեկ էլ տեսար՝ պուպուստ դուրս եկավ հանրապետության նախագահ: Եվ բացի այդ, Սաշային չէին հետաքրքրում հայկական կոտորածները: Նա գտնում էր, որ դա խիստ անհրաժեշտ էր իր՝ մինիստր դառնալու համար: Իսկ «Նոր ուղղագրություն» պատմվածքում հեղինակը ծաղրի է ենթարկում նախկին սեփականատիրոջը, որը դժգոհ է այն բանից, որ իրեն «կարգին» աշխատանք չեն տալիս: Այս պատմվածքում գրողը յուրաքանչյուր անձին անունով չի կոչում, այլ տառերով: Օրինակ՝ նախկին սեփականատիրոջը կոչում է «Հ» տառով, սպեկուլյանտ Նեպմանին՝ «Ի» տառով, որը իմիջիայլոց շատ է փոշմանել, որ չի հետևել վաճառական O-ի օրինակին ու ժամանակին փողը արտասահմանյան բանկերում չի տեղավորել, որ հետագայում հնարավորություն տար փախչելու: Դեմիրճյանն ապրում էր իր ժամանակով: Նրան հուզում էին շրջապատը, մարդիկ: Դեռ չվերակառուցված Երևանը, նրա փողոցներն ու տները, նրանց անմաքուր ու խղճուկ բակերը, նրանց մեջ կուտակված աղբն ու կեղտաջրերը, որոնց նկատմամբ մարդիկ անտարբեր էին, չէին մտահոգվում նրանց վերացնելու հարցերով: «Երգիծանք» շարքի բազմաթիվ ֆելիետոններում նա անդրադառնում է այդ հարցերին:

Որպես հրապարակախոս, Դեմիրճյանը երբեք հանդես չի եկել իբրև մերկապարանոց միտումների արտահայտիչ: Նա արվեստագետ էր և խոսում էր արվեստի լեզվով, պատկերների լեզվով, որոնք հաճախ իրենց համրությամբ անգամ շատ պերճախոս են քան ուրիշ գրողների ամենապերճախոս ճառասած տիպերն ու կերպարները:

Դեմիրճյանը հետևողական բուռն պայքար էր մղում չար մտածողությամբ տառապող մարդկանց դեմ՝ երգիծանքի խարանող զենքը ծառայեցնում էր նրանց դիմակազերծման, ոչնչացման նպատակին: Դրանցից են «Բյուրոկրատիզմ», «Աղճոն և իմպերիալիստական գրոհը», «Համառոտ անմահներ և հավերժական մահկանացումներ» և այլն: Այստեղ արդեն երևում է գրողի քաղաքացիական պարտքի բարձր գիտակցությունը: Դեմիրճյանի օրինակը ցույց է տալիս, թե ինչքան մեծ նշանակություն ունի մամուլի ազատությունը մարդու մտավոր կարողությունների, նրա հոգեկան հարստությունների բացահայտման ու ծավալման, մշակույթի զարգացման համար, նա գրում է. «Օրենքն արտոնում է ինձ գրել, բայց պետք է գրեմ ոչ իմ սեփական ոճով, այլ ինչ որ մի ուրիշով: Ես իրավունք ունեմ դրսևորելու իմ ոգու դեմքը, բայց պետք է տամ նրան հրահանգված ծալքերը: Ո՞ր ազնիվ մարդը չի կարմրի այս պահանջից և իր գլուխը չի թաքցնի պատմուճանի տակ: Դուք սքանչանում եք բնության զմայլելի բազմազանությունով, անսպառ հարստությամբ: Բայց հո չե՞ք պահանջում, որ վարդը մանուշակի հոտ ունենա, ապա ինչո՞ւ եք պահանջում, որ ամենահարուստը, որ ոգին է, գոյություն ունենա միայն մի ձևով: Ես երգիծաբան եմ, բայց օրենքը հրամայում է գրել լուրջ: Ես տաքարյուն եմ, բայց օրենքը հրահանգում է, որ իմ ոճը համեստ լինի: Գորշից գորշ – ահա ազատության միակ թույլատրած գույնը: Ցողի ամեն մի կաթիլն արևի շողերի տակ փայլփլում է անթիվ գույների ծիածանով, բայց հոգեկան արևն ինչքան անհատականությունների մեջ էլ որ արտացոլվի, ինչ առարկաների մեջ էլ բեկբեկվեն նրա ճառագայթները, պետք է առաջացնի միայն մեկ, միայն պաշտոնական գույն»:

Դեմիրճյանը սրտով զգաց և կիսեց ժողովրդին բաժին ընկած վիշտը, հալածանքը, հուզվեց, ալեկոծվեց հարազատ ժողովրդի ողբալի ճակատագրով, նրա նիստ ու կացով, նրա կենցաղով, դառնություններով և վերելքով:

Դեմիրճյանը շնչում էր իր ժամանակի բոլոր հուզող հարցերով՝ իր ընդունակություններն ի սպաս դնելով կյանքի հուզող խնդիրների լուծմանը: Նրա տաղանդը չի սահմանափակվել գործունեության մի նեղ բնագավառով միայն: Լինելով իր ժամանակի աչքի ընկնող երգիծաբանը, նա միշտ ընթացել է իրադարձությունների առջևից: Հրապարակախոս-երգիծաբան Դեմիրճյանի համար բնորոշ է արտասովոր սրամտությունն ու քաղաքացիական արիությունը, հետևողականությունը: Ընթանալով Պարոնյանի, Օտյանի ուղիով, Դեմիրճյանը զարգացրեց, առաջ տարավ երգիծաբանությունը:

Նոյեմբեր, 2012 թ.

Ռոբերտ ԴԱՎԹՅԱՆ

Լեռնահայաստանի ԱՁՆՎԱԳՈՒՅՆ Սպարապետի նամակը բանտից՝
ուղղված Լեռնահայաստանի նախկին վարչապետին, որ ֆռֆռում էր ազատության մեջ....

Նժդեհի նամակը Սիմոն Վրացյանին

Սիրելի՛ Սիմոն,

Գիտեմ, տեսնելով ձեռագիրս՝ պիտի խռովես հոգով: Նժդեհը կենդանի՛, հաւատա՛լ:

- Այո՛, ձայնս գալիս է ոչ թէ գերեզմանից, այլ՝ բանտից, ուր ինձ վիճակւած է ապրել կեանքն ու մահը իրար խառնած, անտրտունջ, քանզի սեփական ձեռքով ես հարթեցի իմ զնդանի ճամբան՝ հաստատելով Արեւելքի հին խօսքը, թէ ամեն մարդ ինքն է կառուցում իր բանտը:

Լսի՛ր, թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս:

1944-ի աշնան, երբ Կարմիր բանակը գտընւում էր Ռումինիայում, եւ հազարաւորները իրենց քաղաքականապէս վտանգւած համարելով հեռանում էին՝ ես չհեռացայ Բուլղարիայից, թէեւ իդեալական կարելիութիւններ ունէի ուզածս վայրկեանին անցնելու ուզածս երկիրը: Ես մնացի, որովհետեւ պէտք էր մնալ:

Մնացի, որովհետեւ շատերի պէս ես էլ կկարծէի, թէ Կարմիր բանակը պիտի շարժւի Թուրքիոյ դէմ, որով իրականացած կլինէր մեր ազգային երազը: Կար ե՛ւ այն տանջող միտքը, թէ իմ հեռանալը կարող է պատճառ դառնալ շատերի ձերբակալման: Աւելացնեմ եւ այն, որ հաւատում էի, թէ իմ արած ասպետա-հայրենասիրական քայլը – իմ մնալը – բաւական կլինի խորհրդային իշխանութեան մոռացնել տալու իմ հակասովետական անցեալը: Ահա՛, մօտաւորապէս, այն դրդապատճառները, որոնք ստիպեցին ինձ մնալ, չհեռանալ: Դժբախտաբար խորհրդային բանակը չշարժւեց Թուրքիոյ դէմ, եւ հենց դրանով էլ պայմանաւորւեց իմ ողբերգութիւնը: Մի օր, Կարմիր բանակի ժամանումից ամիս անց՝ ինձ հրաւիրեցին խորհրդային լիգացիա, օդանաւով փոխադրեցին Մոսկուա եւ առաջնորդեցին... բանտ:

Գիտես, սիրելի՛ս, որ կեանքում իմ ուրախութիւնն ու վիշտը մի հատիկ անուն ունէին – Հայաստա՛ն: Երբ կեանքիս մայրամուտին ինձ չյաջողւեց, իբրեւ զօրական, կռւել ու մեռնել հայ հողի համար՝ վճռեցի մեռնել բանտում իբրեւ նահատակ: Այս ապրումներով, 1948-ի ամռան, փոխադրւեցի հեռաւոր հիւսիս: Ուժասպառ էի, բայց ոչ ոգեսպառ: Ապրում էի նահատակի կրքոտութեամբ եւ ուրախութեամբ: Ճիգ էի անում, ինչպէս եւ այժմ, մնալ ոտքի վրայ եւ մեռնել գիրքը ձեռքիս: Այս վիճակում էի, երբ անսպասելիօրէն, որպէս Deus ex machina, յայտնւեց Յովհ. Դէվէջեանը – նրան էլ բերին նոյն բանտը եւ նոյն խուցը, որում գտնւում էի ես:

Գիտես, որ տարիներով մենք խորթացած էինք իրարից: Խոր տառապանքը ենթակային ամէն բանից առաջ երես երեսի է բերում ճշմարտութեան հետ: Բաւական եղաւ, որ իրար աչքերում ուրախութեան արցունք տեսնենք, որպէսզի անխօս հաշտւենք, եղբայրանանք:

Եւ, այնուհետեւ սկսւեցին մեր անանձնական մտմտուքները: Ի լուր խմորւող նոր համաշխարհային սպանդի – որ կարող է անդարմանելի անդրադարձում ունենալ մեր ժողովրդի ճակատագրի վրայ՝ մենք ե՛ւ խորհրդածում էինք, ե՛ւ տագնապում: Պատերազմ – անյայտութեան թագաւորութիւն է դա: Վաղը կարող են տեղի ունենալ այնպիսի քաղաքական անակնկալներ, որոնք մերօրեայ Մետերնիխների եւ Տալէյրանների մտքով իսկ չեն անցնում: Ի՞նչ կլինի վաղը – չգիտե՛նք:

Սակայն, հաշւի առնելով՝ մարդկութեան պատմութեան մէջ նախընթաց չունեցող թշնամատեցութեան պարոկսիզմի եւ նորահնար զէնքերի իրողութեան փաստը՝ չենք կարող հայօրէն չանհանգստանալ, թէ վաղը մահացուօրէն կարող է աղէտւել Հայաստանը:

Մեկնելով այն իրողութիւններից,

1) որ թրքութիւնը պատմականօրէն հաստատած է, թէ պատրաստ է ամենայն չարիք հասցնելու հայութեան.

2) որ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին տեղի ունեցան հայկական կոտորածներ, եւ եղեռնագործ ազգը մնաց անպատիժ.

3) որ վերջին պատերազմին միլիոնաւոր հրեաների ջարդը արժանացաւ՝ մարդկութիւն եւ արդարութիւն ծաղրող դատական մի ֆարսի միայն.

4) որ ազգերի միութեան կողմից առնւած որոշումը «Գենոսիդ»ի մասին՝ թելադրւած է այն մտահոգութեամբ, թէ ամբողջ ժողովուրդների ոչնչացումը անհաւանական չէ ե՛ւ վաղւայ պատերազմի ժամանակ.

5) որ մեր երկիրը իր աշխարհագրութեան բերումով նախասահմանւած է վաղը դառնալու ռազմագիտական ակտիւ պլացդարմ կամ ինքնապաշտպանութեան բազա, որով – երկու դէպքում էլ – թշնամու առաջին հարւածը տրւելու է Հայաստանին, եւ որ հարւածողը լինելու է թուրքը՝ իբրեւ զինակից եւ հովանաւոր ունենալով մի շարք զօրաւոր պետութիւններ:

6) որ Թուրքիոյ վճռական մասնակցութիւնը գալիք պատերազմին, նրան վստահւած աւանգարդի դերը, եւ այն, որ նա երեւան է գալու ազգերի միութեան դրօշի տակ – այդ եւ այլ կարգի իրողութիւններ երկիւղի լուրջ հիմքեր են տալիս ենթադրելու, որ շատ հեշտութեամբ կարող է «գենոսիդ» տեղի ունենալ Հայաստանում – կարող է գլխովին ոչնչանալ մեր ժողովուրդը:

Թուրքը փորձեց՝ առաջին համաշխարհային պատերազմին, բայց չկարողացաւ սեփական ուժերով միանգամից թաղել հայութիւնը եւ իր դատը: Այժմ նա իր հայասպան ծրագիրը պիտի աշխատի իրագործել թէ իր եւ թէ այլոց ձեռքերով:

Ճիշտ է, մեծ են Հայաստանի պաշտպանողական միջոցները, եւ անսպառ՝ Խորհրդային Միութեան պոտենցեալը: Այդ այդպէս լինելով հանդերձ՝ պանթուրանական երազներով ապրող Թուրքիոյ ներկայ վճռական կեցւածքը, նրա մահացու թշնամանքը դէպի հայութիւնը, ինչպէս եւ այն պարագան, որ պատմութեան մէջ առաջին անգամ լինելով համընկնում են, համերաշխում քրիստոնեայ Արեւմուտքի եւ Թուրքիոյ շահերը լուրջ հիմք են տալիս խորապէս մտահոգւելու մեր ժողովրդի ճակատագրով:

Մի ափ երկիր, որի վրայ կենտրոնացած է հայութեան 2/3-ը – ահա՛ օրւայ Հայաստանը: Նման վիճակում, պատերազմի ժամանակ, գլխովին չոչնչանալու համար պէտք է կենդանի Արարատ լինել:

Նկատի առ – թուրքերը հակախորհրդային օդային ուժերի համար պիտի կատարեն «սրբագրիչ»ի դեր՝ իրենց ուզած ուղղութիւնը եւ օբյեկտները տալով իրենց քրիստոնեայ զինակիցներին: Նրանք պրովոկատիւ հաշիւներով, հազար ու մի մեքենայութիւններով պիտի գրգռեն իրենց զինակիցներին Հայաստանի ու հայութեան դէմ: Օգտւելով առիթից՝ նրանք կաշւից դուրս պիտի գան՝ կործանելու Թուրանի ճամբան կտրող մեր երկիրը:

Նշեմ ե՛ւ այն, որ վաղւայ պատերազմը, լոկ իր գոյութեան փաստով, եւ անկախ պատերազմող կողմերի կշռից ու պատերազմի այս կամ այն ելքից, կարող է անդարմանելիօրէն աղետել մեր ժողովուրդը:

Չպիտի մոռանալ, որ աւելի քան հաւանական է ազգերի միութեան եւ որոշ քրիստոնեայ պետութիւնների անւան չարաշահումը թուրքերի կողմից՝ Հայաստանը կործանելու նպատակով:

1952-ի ամռան, Վանի մէջ տեղի է ունեցել մի հակահայ ցոյց՝ իբրեւ արձագանք Անգարայում եւ Պոլսում կատարւած հայադաւ գրգռութեանց: Այդ առթիւ «Վան Սեսի» թերթը կոչ է ուղղել թրքութեան՝ «ոչնչացնել հայերին մինչեւ վերջին մարդը»: Ըստ այդ թերթի՝ «թուրքերի պանթուրանական երազը կարող է իրականանալ միայն այն ժամանակ, երբ Թուրքիոյ բոլոր անկիւնները կմաքրւեն հայ ազգաբնակութիւնից»: Ինչպէս տեսնում ես հայերի նոր ջարդի խնդիրը թուրքերը ծեծում են հրապարակաւ – հոգեբանօրէն եւ քաղաքականապէս նախապատրաստում 1915-ի արիւնոտ ռեցիդիվը: Գիտցիր եւ այն, որ թուրքերի սպառնալիքն ուղղւած է ոչ միայն Թուրքիոյ մէջ ապրող հայերի, այլեւ Խորհրդային Հայաստանի դէմ: Վերոյիշեալ թերթը՝ թուրքերին համարելով ուրարտացի, իսկ Խ. Հայաստանի տարածքը՝ բաղկացուցիչ մասը հին Ուրարտական թագաւորութեան՝ ժխտում է հայերիս պատմական իրաւունքը մեր հայրենիքի եւ նախահայրենիքի վրայ: Սխալ կլինէր Վանի թուրքերի հակահայ ելոյթը համարել իբրեւ սպորադիկ (եզակի, պատահական- խմբ.) ելոյթ – դա մատնում է թուրք կառավարութեան եւ զանգւածների ընդհանուր մտայնութիւնը: Ահա՛ թէ ինչու օր առաջ միջազգային հրապարակ պիտի դրւի մեր ժողովրդի բացառիկ վիճակի խնդիրը: Միայն այսպիսով կարելի է կանխել աղետը՝ նախապատրաստւող: Արտաքնապէս հակաթուրք Եւրոպա կար, բայց եւ այնպէս տեղի ունեցան հայկական ջարդերը: Այսօր, երբ այնքան թրքապաշտպան ուժեր կան, ի՞նչ երաշխիք, որ թուրքն իբրեւ պատմութեան ծանօթ ռեցիդիվիստ չի՛ կրկնի իր եղեռնագործութիւնը: Ապա ուրեմն՝ ի՞նչ անել, որ պատերազմի դէպքում նկատի առնւի մեր ժողովրդի անօրինակ աղետաւորութեան փաստը (առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ) եւ օրւայ իր բացառիկ վիճակը ու հիւլէականով չռմբակոծւի Հայաստանը...

12 մարտ 1953 թ., Երեւանի բանտ

nakhshkaryan.blogspot.com:

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր իրականությունը սարսափելի է: Միջին վիճակագրական քաղաքացին չունի ամենակարևորը. անվտանգության երաշխիքը: Այժմ անվտանգության և հանգստի երաշխիք կարող է տալ միայն գերեզմանոցի ադմինիստրացիայի ղեկավարը: Այն էլ ոչ ամեն քո: Շարքային քաղաքացուն աշխատավայրում թալանում են պետությունն ու ձեռնարկատերը (ամեն ձեռնարկատեր չէ, որ մարդկային կերպարանք ունի), փողոցում նա ցանկացած պահի կարող է դառնալ բազմապրոֆիլ աֆերիստների զոհ, նրա երեխաներին կարող են անպատիժ նեղացնել, գողանալ, սպանել, օրինապահների կեսը բանդիտներ են, բանդիտների կեսը՝ օրինապահներ: Այս պղտոր ջրերի մեջն է, որ ծնվում են կազմակերպված հանցագործ միավորումները, որոնք, օգտվելով պետության մտավոր ու ֆիզիկական տկարությունից, գիլուկի նման փաթաթվում են մարդկանց վզին ու ծծում նրանց աշխատանքի արդյունքը: Կողքին կանգնած թաղայինը նրանց դաշնակիցն է, տեղական իշխանության պատասխանատու անձը վաղուց է ծախվել Սատանային, մոլախոտ հարևանի «թազի թուլեն»՝ այս վերջինների կամավոր տեղեկատու-հետախույզն է: Բողոքի դիմում գրելիս միլիցիայի 100 «փթանոց» հերթապահ սպան ավելի շուտ կծննդաբերի, քան թե արագ միջոցներ ձեռք կառնի («չես կարո՞ղ ընդհանուր լեզու գտնել»):

Շրջապատված հանցագործներով, անտարբեր դրացիներով ու պոռնկաբարո օրինապահներով (ես հեռու եմ այն մտքից, թե միլիցիայի բոլոր աշխատողները շուն են ու շան որդի: Ո՛չ: Լավերը պարզապես փոքրամասնություն են ու եղանակ չեն ստեղծում), մարդը տեղի է տալիս: Բայց լինում են նաև բացառություններ: Դրանցից մեկի մասին ես լսեցի իմ սրճարանի հաճախորդներից մեկից, որը եղել էր այդ դեպքերի մասնակիցն ու շտապում էր վերադառնալ (փախչել) Հայաստան...

... Սիբիրյան մարզերից մեկում Բաղդասարյան եղբայրները մի կիսամեռ կոլտնտեսություն են ուշքի բերում: Սակայն նրանց «Ֆազենդայից» ուզում են օգտվել նաև «լավ տղերքը»:

Թե ինչ եղավ հետո, կասի ներքոհիշյալ բալլադը, որը մտել է «Հայերի արկածները Ռուսաստանում» երգիծական ստեղծագործությունների շարքի մեջ:

Եվ այսպես...



Գողական էր գնում Աբոն:
Սրան կծում, նրան կծում,
Ու մեր կյանքի սև ծովի մեջ
Շնաձուկ էր իրեն կարծում:

Անպատիժ էր իր ողջ կյանքում
նա մնացել.
Բուֆետապան հոր շվաքում
«էշ կերել էր, էշ մեծացել»,
Ու մի բան էր նա հասկացել.
որ աշխարհում
Անկարեկից, բիրտ ու դաժան ուժն է տիրում:
Որ աշխարհում այս տմարդի
Մեկը պիտի հա՜ աշխատի, մյուսն՝ ուտի,
Մեկը պիտի լինի խուզող, մեկը՝
խուզվող պիտի լինի,
Մեկը պիտի որ թա՛ն խմի,
Մեկը՝ կարմիր, վրացական ընտիր գինի:

Հենց այս խելքով ու հայացքով
նա կյանք մտավ,
Ու գողական շրջապատում
իրեն վայել տեղը գտավ:
Հարկահավաք «Կոզբադինն» էր
իր տարածքում,
Աշխարհակալ Ռուսաստանի
հետամնաց մի քաղաքում:
Շուկա, խանութ, կոպերատիվ,
կամ նորաստեղծ գրասենյակ -
Իրենց ոտքով գալիս էին ու հայտնվում
«լավ տղերքի» կտուրի տակ:
Գալիս էին ականջակախ, անցնում էին
մեր Աբոյի «թրի տակով», լի քսակով,
Ու դատարկում լի քսակը մինչ հատակը:
Ու հետո էլ իրենք իրենց մխիթարում ու համոզում,
թե «այդպես է երկրի կարգը,
ժամանակն է այդպես ուզում»:
Ու վա՜յ նրան, ով որ հանկարծ
պարտավորված՝
Հասանելիք գլխահարկը ուշացներ,
Կամ թաքցներ,
Կամ կորցներ:
Անմիջապես բակլաների* գլուխն անցած՝
կգար Աբոն:
Կզններ,
Կքններ,
Հետո վերջում, իր ծամծմած,
«ծանրակշիռ» խոսքը կասեր.
Որ պարտքերը ժամանակին պիտի մարվեն,
Որ տղերքը դեռ «նստած են»,
Ու միլպետի, բանտապետի
ծնոտները պիտի յուղվեն,
Որ այսինչի կամ այնինչի վատ գործերը
յոլա տարվեն:

Հեյ-վա՜խ աշխարհ, այս ի՞նչ տեսանք,
Այգուն տիրող մոլախոտի դարին հասանք:

Գոհ էր կյանքից աղա Աբոն,
Դժգոհ չէին նաև Համոն, Քյաչալ Սամոն,
Կուշտ փորով էր արդեն քնում
Տափակ Շմոն,
Որ մարդակեր թաղայինի ճանկից փախել,
Կուչ էր եկել մեր Աբոյի մեծ շվաքում,
Աշխարհակալ Ռուսաստանի
հետամնաց մի քաղաքում:

***

Անցնում էին օրերն այսպես:
Քանի գնում,
Արևի տակ մեր Աբոյի տեղն ավելի էր
մեծանում:
Երևելի էր նա դարձել
ֆինանսական իր վիճակով,
Ամեն տեղից ի մի եկած
թազի թուլեքի ոհմակով:
Ու կարծում էր, որ ինչպես միշտ,
ողջ աշխարհում
Անկարեկից, բիրտ ու դաժան
ուժն է տիրում:

Շուռ էր եկել աշխարհը հին,
մարդկանց հոգին,
Օրենք չկար, կյանքն էլ ուներ
մի օղու գին:

Ը8

ԴԸ

Վախը բռնել էր մարդկանց բկից
թափ էր տալիս,
Ձեռքի ափով մարդկանց դեմքին
ծափ էր տալիս:

***

Ու մի օր էլ կողքի մայլից մեր Աբոյին
լուր բերեցին,
Թե ցեղակից եղբայրները
այսինչ գյուղում, այսինչ տեղում
Վաղուց մեռած մի կոլխոզի
կյանք են տվել,
Հայաստանից արագիլի նման չվել,
Բույն են դրել մեր արծաթյա
գետի ափին,
Ձեր քարերի նման համառ
կանգնել են մեր գործի ճամփին:

Ու ոչ մեկին...ոչ մի գրամ. ոչ մի դրամ...
Այդ մասին էլ խոսք բացելիս
շուռ են գալիս,
Դատախազին, իմացել ենք,
փող չեն տալիս,
Թաղայինի վրա հաչում,
Սանձ ու մտրակ չե՜ն ճանաչում:
– Ուրեմն այսպես
աախպեր տղերք, – Աբոն ասաց,–
Թող չլինի ձեր սրտերում
ոչ մի կասկած:
Ինչ որ պետք է զենքյակներից,
ես կստանամ,
Ու ինձ պետք է, որ ձեզանից
ես իմանամ,
Սպասվելիք եկամուտը
ո՞նց ենք կիսում:
– Ախպոր նման հիսուն-հիսուն,
էլ չենք խոսում:
– Շատ լավ, - ասաց Աբոն սրանց, –
թե հարց չունեք,
Հաշվենք, որ նոր եկամուտի
աղբյուր ունենք:

Մյուս օրը մայրամուտին,
Երբ արևի ճաճանչները հրաժեշտ են տալիս սիրով
Արծաթահոս ոլոր գետին,
Դեպի կոլխոզ էր սլանում
«լավ տղերքի» քարավանը:
Ու չգիտեր նորեն ծնված մեր ավանը,
Որ աշխարհից ու Աստծուց
հեռու կեցող այս անկյունում
Աբոներ ու համոներ են «թագավորի» նման կենում:

Երեք եղբայր, երեք բարդի Արարատյան հայոց դաշտից
Նոր հայրենիք էին կերտում,
հեռու հայոց երգ ու վշտից:
Հեռու անտաշ ու լպրծուն նոր բարքերից,
Յուրայինի ձեռքով բացած խոր վերքերից:
Լցվել էր գոռ եղբայրների համբերության ավազանը,
Նորեն առել էր հայորդին
պանդխտության գավազանը:
Նորեն հայը տուն էր կերտում ուրիշ հողում,
Իր արյունով ու քրտինքով հողն էր ցողում:

Թողնելով տուն, կին, երեխա,
ճամփին նայող ծնողներ,
Քարը քարին էին դնում երեք եղբայր զոր-գիշեր:

Մայրամուտ էր: Ու ոչ մի բան
չէր խանգարում հանգստին,
Մեծ եղբայրը ծառին թիկնած
«Վերքն» էր կարդում վերստին,
Մյուսները ընկերներով թեժ խարույկին բոլորած,
Գինին էին համտես անում, գառան մսով խորոված:
Հայոց երգն էր ձգվում գետի
արծաթազօծ երկայնքով,
Եղբայրների սիրտը լցնում ուրախության տարերքով:

Ու հենց քեֆի, զվարճության,
ուրախության այդ պահին
«Մերսեդեսով» կոլխոզ մտավ,
նստած թավշե իր գահին,
«Ավտորիտետ» աղա Աբոն հավատարիմ բանակով,
Կարծես կազինո էր գնում,
որ զառ խաղա բաժակով:
– Ո՞վ ա էստեղ նաչալնիկը, –
ինքնավստահ իր տոնով
Տափակ Շմոն առաջ եկավ, ծովագռավի իր ձենով:
– Ես եմ, ի՞նչ կա, – ավագ եղբայրն
ելավ հանգիստ իր տեղից, –
Մի ներս եկեք, տեսնենք ո՞վ եք, ո՞ր տեղից եք,
ո՞ր ցեղից:
– Մենք էստեղի նայողներն ենք,
մենք էլ հայ ենք, ապեր ջան,
Մեզ հետ պիտի դուք աշխատեք, –
խոսեց Շմոն ժրաջան:
– Թե ոնց պիտի ես աշխատեմ, ես լա՛վ գիտեմ,
ա՛յ ընկեր,
Մենք մենակ ենք մեր գործն անում,
պետք չի քեզ պես գործընկեր:
Թե ուզում եք «կտուր» լինել,
սխալ ճամփով եք եկել,
Ու լավ կանեք, որ չերևաք
դուք կոլխոզում մեր մեկ էլ:
Մենք սովոր ենք լավ ընդունել
թեկուզ անկոչ մեր հյուրին,
Բայց չենք թողնի, որ քար գցեն
մեր աղբյուրին, մեր ջրին:
Ես իմ խոսքը ձեզ ասեցի, էլ բան չունեմ ասելու,
Ժամանակը իմ շատ է թանկ
ձեր աղոթքը լսելու:
– Չհասկըցանք, արա աախպեր –
քանի գլուխ դու ունես,
Որ մեր մայլում գործ ես անում
առանց կտուր, քեզուքեզ:
Արդեն Աբոն էր հոխորտում,
մեքենայից դուրս գալով,
(Շմոն խոսքը «մեծին» զիջեց,
հարգանքի տուրքը տալով):

Ինքնավստահ, ամբարտավան
այս բանակին հանդիման
Կրտսեր եղբայրը երևաց,
ու որպես խոսք հաշտեցման,
Առաջարկեց իրեն լսել, հաշտ ու խաղաղ բաժանվել,
Ինչու՞ իրար նեղացնել, կամ անտեղի անպատվել:
– Մենք, ախպեր ջան, կտուր ունենք,
ողջ աշխարհը լավ գիտի
Նրա խոսքը, նրա գործը:
Դուք էլ գիտենաք պիտի:
Այսօր նա մեզ հյուր է եկել,
թե խոսք ունեք ասելու,
Նա ուրախ է ծանրակշիռ, լավ տղերքին լսելու:
Երեք վայրկյան դուք համբերեք,
գնամ նրան բերեմ դուրս,
Համոզված եմ, հարց չի լինի,
գոհ կլինեք մեկ մեկուց:
– Կանչիր թող գա, – Աբոն ժպտաց
ու կրտսերի խաղաղասեր խոսքերից
Ներքուստ ձեռքերն իրար շփեց, –
լավ է խոսենք գործերից:
Քիչ անց կրտսերը դուրս եկավ:
Նրա տեսքից ու դիրքից
Շմոն վախից կծեց լեզուն,
մի «վայ» թռավ չոր բկից:

ԸԹ

ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե ես հայ լինեի, ինձ երջանիկ չէի համարի մինչև այն պահը, քանի դեռ ազգիս թափառական քարավանները չեն հավաքվել իրենց պապենական հողի վրա:

Ջեյմս Օլդրիջ

Հայաստանը քաղաքակրթության օրրան է, Հին աշխարհի առաջատար և զարգացած երկրներից մեկը:

Ֆրանց Վերֆել

Հայաստանն այն երկիրն է, որը վերափոխում է ցանկացած մարդու՝ իր հնադարյան մշակույթի նոր հոգևոր արժեքների ստեղծման համադրության մեծագույն շնորհքով:

Իլյա Էրենբուրգ

Երկրագնդի երեսին չկա այլ երկիր, որն այսքան հագեցած լինի հրաշքներով, ինչպես հայերի երկիրն է...

Ջորջ Բայրոն

Հայաստանը՝ հրաշքների երկիր է... Եթե ինձ հարցնեն, մեր մոլորակի վրա որտեղ կարելի է հանդիպել մեծ հրաշքների, ես, առաջին հերթին, կնշեի Հայաստանը... Ակամա ապշում ես, որ աշխարհի այս փոքրիկ հատվածում հնարավոր է հանդիպել այնպիսի կոթողներ ու այնպիսի մարդկանց, որոնք կարող են լինել ողջ աշխարհի զարդը: Եռակի օրհնյալ եղիր Հայոց աշխարհ՝ տաղանդների հայրենիք, հսկայական արարչագործությունների բնօրրան:

Ռոքուել Քենտ – ամերիկացի նկարիչ

Հայաստանի լույսը հասնում է մեզ Մարտիրոս Սարյանի շնորհիվ: Երանության լույսը, լուսավորող մարդկանց, սարերը, պտուղները: Սա նորովի հայտնաբերված գանձ է: Դրա գույնը այնքան սքանչելի է, որ մեր Սեզամի և Մատիսի կողքին՝ հարյուրամյակներով պետք է առաջնահերթություն տալ Սարյանին:

Լուի Արագոն

8Ͻ

Մյուսներն էլ կաթվածահար,
ասես մեխված չոր հողին
Նայում էին թուքը ցամաք...
ավտոմատի բաց փողին:

– Արա՛մ, ի՞նչ է, խենթացե՞լ ես, – մեծ եղբայրը ձայն տվեց,
Բայց հասկացավ. ուշ է արդեն, թափանիվը պտտվեց:
– Չմոտենա՛ս, չխանգարե՛ս,
սրանց լավ եմ ճանաչում,
Շունը մահակ տեսնելիս է, որ այլևս չի հաչում:
– Դե՜՞, ախպերնե՜ր, հիմա տեսա՞ք
կտուրն ով է կոլխոզի,
Քեռի Միշան** չի ընդունում
ձեր մռութները խոզի:
Մեր ազգին էլ հեչ պատիվ չի,
որ մեծ հողում ռուսական
Աճում են ու բարգավաճում
մոլախոտերն հայկական:
Մի երկու քայլ առա՛ջ եկեք,
կուզեմ տեսնել ձեր պետին,
Կուզեմ տեսնել ձեր օրդենի հռչակավոր վարպետին:
– Ես եմ, դու քո խոսքը ասա, –
խոսեց Աբոն գունատված,
Ու նկատեց. ախոյանը չունի ոչ խիղճ, ո՛չ Աստված:

– Ա՜, էտ դու ե՞ս փող հավաքում
արհեստավոր մարդկանցից,
Ու կարծում ես կով ես կթում:
Կտրելու՜ եմ քեզ ծծից:
Քեզպեսների վրա, չախկա՛լ,
ատամ ունեմ ես վաղուց,
Մե՜ծ հաճույք եմ ստանալու
ոխս ձեզնից հանելուց:

Կրակահերթը որոտաց,
քարե կարկուտ թափվեց վար,
Հնձեց մեկեն «լավ տղերքին»,
գետին փռեց շանթահար:
Իրարանցում եղավ սաստիկ, մնացորդը բանակի
Դրոշն իսկույն ի վար նետեց,
էլ պահը չէր հանաքի:

– Լեշերը ձեր շուտ հավաքեք,
բահերն հե՛ս են, շու՛տ, արա՛գ,
Էսօր թաղում է անտառում
անթուղթ ու անհիշատակ:

Կրտսերի կարճ այս խոսքերում զրնգոցն էր մետաղի,
Կտուցներում բակլանների թուքը դարձել էր լեղի:
Ու ոչ միայն բակլանների: Ընկերները քարացած
Չէին կարծում, որ կտեսնեն նման կտրուկ շրջադարձ:
Բայց նայելով արնածարավ, կրտսերի ժանտ աչքերին,
Որոշեցին...սատար լինել եղբոր անսանձ կրքերին:
Քիչ անց մթին մի ծմակում
մի խորունկ փոս փորեցին,
Ու տղերքին ավտորիտետ անհիշատակ հորեցին:
Առանց քելեխ, առանց արցունք,
առանց դուդուկ ողբաձայն,
«Լավ տղերքը» պարարտ հողում
որդերի կերը դարձան:
Ու դաս եղավ «ապերներին» կոտորածն այս դժնդակ,
Որ ուժեղից ուժե՛ղը կա
համեստ մարդկանց կաշվի տակ:
Որ կա՛ն մարդիկ, գոմեշ կտա՛ն,
բայց քեզ «մեղա» չեն ասի,
Ու բրդատու ոչխարների շարքում իրենց չե՛ն դասի:

Պատմություն է սա իրական, ողբերգական մի պատում,
Նաև խրատ՝ բոլոր նրանց, ովքեր անսանձ, անկշտում
Աչք են դնում ուրիշների աշխատանքին ու կայքին,
Ու կարծում են, թե իրե՛նք են, որ կարող են ամենքին
Մատով ցույց տալ, հրամայել, ձեռաց օրենք հնարել,
Ու չգրված օրենքներով մարդկանց քերել կամ ներել:

Անցան օրեր: Մի առավոտ սուրհանդակը քաղաքից
Հեռագիր էր կայծակ բերել
իշխանավոր մի դեմքից:
Քաղաքային տոն էր նշվում,
հարյուրամյա տարեդարձ,
Կանչում էին եղբայրներին
որպես գործիմաց մարդկանց:
– Դե, եղբայրնե՛ր, – կրտսերն ասաց, –
չէ՞ որ ես ձեզ ասացի.
Պառավին ենք սայլից գցել,
ձին կանչում է մեզ հացի:***

* **Բակլան** – ծովագռավ (ռուսերեն). բախտի բերմամբ թե պատահմամբ բանդիտների այս բնութագիրը իսկականն է, որ կա:
** **Քեռի Միշա** – Միխայիլ Տիմոֆեևիչ Կալաշնիկով, ԱԿՍ-75, Միխալիչ, Կալաշ-Ակա և այլն:
*** Սա ռուսերեն **«Баба с возу – кобыле легче»** ասացվածքի հայերեն մոտավոր տարբերակն է, որով հերոսն ուզում է ասել, որ ոչնչացնելով բռնաշորթներին՝ թեթևացրել են իշխանությունների հոգսը:

Սամվել ԱՎԴԱԼՅԱՆ

Ֆոտոլրագրողն ու մշակույթի երախտավորը

Սովորաբար ճանաչված մարդկանց պորտրետների շարքը միշտ կայանում է նրանց մահից հետո: Երբ արվեստագետը, ստեղծագործողը մեր կողքին է, հիմա ապրում է, մենք նրան չենք տեսնում, երբ հեռանում է, նոր ենք փորձում ճանաչել:

Ռոբերտ Շահնազարյան լուսանկարիչը

Ակնթարթ

Բնությունը օժտում է հանճարով,
հասարակությունը՝ խելքով,
զբաղմունքը՝ ճաշակով:

Բոնալդ

Ռոբերտ Շահնազարյան

Ու՞մ են ներկայացնում ֆրանսիացի փիլիսոփա-հրապարակախոսի այս խոսքերը: Գուցե շատերին: Բայց ով ճանաչել է կիրովականցի Խոմիչին (Ռոբերտ Շահնազարյան) առաջիններից մեկը նրա անունը կտա:

Ճակատագիրը շռայլ գտնվեց նրան մարդկային առաքելությամբ ու լավագույն հատկանիշներով օժտելու մեջ: Նա իր մեջ ամփոփում էր մարդու և առաքինող շնորհների լավագույն հատկությունները:

Յուրաքանչյուր քաղաք իր սիմվոլն է ունենում: Խոմիչ լուսանկարիչը մեր քաղաքի սիմվոլներից մեկն էր: Նրա կենսագրությունը միաձուլված էր սիրելի քաղաքի հետ:


Ի պաշտոնե կիրովականցի, որ ինչ անում էր, անում էր ոչ թե պարտադրված, այլ ինչ հոգին էր թելադրում: Մարդ, որ իր արվեստը երբեք չի վաճառել, այլ միշտ նվիրել է:

Մարդ, ում արվեստը մեզ՝ ապրողներիս է պետք, նրան պետք չէ, նա չկա:

Ամեն մի օժտված մարդ մի աշխարհ է իր ուրույն զգացողություններով: Խոմիչն էլ հայրենի եզերքում, ծննդավայրում ապրած նվիրական պահեր անմահացնելով իր լուսանկարներում, մեզ էր ներկայանում իր ներքին աշխարհով և շատ ու շատ ավելի հետաքրքրական կողմերով: Նրա լուսանկարները մեր կյանքի տարբեր ժամանակաշրջանները, կոնկրետ մարդկանց, բնության զարմանահրաշ մեր անկյունի՝ Կիրովական-Վանաձոր դեպքերը ակնթարթի հավերժացմամբ արտացոլող վավերագրերն են: Նա մնայուն արժեք է թողել եկող սերնդին՝ հավերժացնելով հայրենի քաղաքի պատմությունը: Նրա ներկայությունը շարունակում է մնալ



Լոռվա պար



Մենության կարեկիցներ



Առանց մեկնաբանության



Երկու սերունդ

мեզ հետ՝ կիրովականցիներիս ու ընկեր-բարեկամների հետ:

– Հայացքով անընդհատ նրան ենք փնտրում Արցախ պուրակում: Թվում է՝ ուր որ է՛ կմոտենա, կկապակի կամ իր դժգոհությունը կհայտնի այս կամ այն բնագավառում փիրող անարդարությունից: Նա գեղագետ լուսանկարիչ էր:

Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆ

Խոմիչի վարպետությունը նրա դիտողականությունն էր: Լուսանկարները չափազանց մոտ ու նույնական են թվում այն պատկերներին, որոնք արտացոլում են (Ծանոթություն, Երկու սերունդ, Առանց մեկնաբանության, Լոռվա պար, Մենության կարեկիցները), բայց Խոմիչի ու մեր դիտողի միտքը կենտրոնանում է ոչ թե ինքնին պատկերի, այլ նրանում ամփոփված խորհրդի վրա: Եվ ահա թե ինչպես է տեսնում Շահնազարյանի լուսանկարչությունը արվեստաբան, լուսանկարիչ Վահան Քոչարը.

– Ակնհայտ է, որ Ռոբերտ Շահնազարյանը գեղարվեստական լուսանկարչության ավանդական թեւի վարպետներից է, եւ այդ է պատճառը, որ նա ստեղծագործությունը դիտողին հասցնելու գործում ավելի շատ ապավինում է մտքին ու հուզականությանը, քան կատարման տեխնիկական կողմին:

Լուսանկարչությունը, որ ընդամենը աչք-ոսպնյակ-օբյեկտ հարաբերությունն է լույսային միջավայրում, այսինքն՝ գերազանցապես անհատական դիրքորոշում և արդյունք, ճիշտ և ճիշտ ինդիվիդումի դրսևորմանն է համապատասխանում: Եվ այս պարագայում օբյեկտը, դա լինի մարդ, բնանկար, քաղաքի թե թաղամասի համայնապատկեր, փոխադարձաբար ակտիվ է լուսանկարչի նման:

Եվ ինչպես ճիշտ է նկատում Ռոբերտ Շահնազարյան «Ակնթարթ» գրքի խմբագիր-հրատարակիչ Վան Արյանը, ընկերոջ լուսանկարները պատկերում են ոչ միայն տվյալ պահը, այլ ստիպում դիտողին խորհել դրանից առաջ կատարված ու դրանից հետո տեղի ունենալիքի մասին:

Շահնազարյան անհատը հասցրեց ստեղծագործական տպավորիչ կենսագրություն ձևավորել, այդ էջերին թողնելով գնահատանքի արժանի ժառանգություն:



Ծանոթություն

Նրա համար ստեղծագործելը իր մասնակցությունն էր կյանքին, քանզի նրա արվեստը հիմնված էր զգացմունքների վրա, կյանքից ստացած իր տպավորությունների վրա, որովհետև կյանքում անսովորը տեսնելու ու գնահատելու շնորհով էր օժտված Ռոբերտ Շահնազարյանը:

Լեւոն ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱ ԱՍՏՂՈՎ ԵԿԱՎ ՀԱՅ ԵՐԳԻ ԱՆԴԱՍՏԱՆ

«Չեմ էլ պատկերացնում, որ մեկ ուրիշը կարողանա այդպես հասկանալ հոգիս: Կարծես երգերս հենց քեզ համար են գրված: Ձայնդ անսպառ է, աղջիկս», – ասել է Ավետիք Իսահակյանը՝ լսելով իր բանաստեղծությունների հիման վրա գրված ստեղծագործությունները Օֆելյա Համբարձումյանի կատարմամբ:

Տարիներ շարունակ իր «անսպառ ձայնով» ու հոգեբով կատարումներով երգչուհին հուզել է հայ երգի սիրահարներին Հայաստանում ու նրա սահմաններից դուրս: 1944 թվականից նա հեռուստատեսության և ռադիոյի Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անսամբլի մեներգչուհին է: Օֆելյա Համբարձումյանի երգացանկում եղել են հայ ժողովրդական, գուսանական և աշուղական երգեր, որոնցում իր ուրույն տեղն են գրավում Սայաթ-Նովայի ստեղծագործությունները: Կատարել է Ֆարհադի, Ջիվանու, Շերամի երգերը, աշուղ Աշոտի և աշուղ Շահենի ստեղծագործությունները: Համերգներով հանդես է եկել տարբեր երկրներում: Մի ամբողջ կյանք նա նվիրել է մեր ժողովրդական երգին: Օֆելյա Համբարձումյանի վաստակը գնահատվել է ըստ արժանվույն. նրան շնորհվել է հանրապետության ժողովրդական արտիստի կոչում, հայ երգարվեստում ունեցած մեծագույն ծառայության համար երգչուհին արժանացել է ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի:

Օրերս ՀՀ մշակույթի նախարարության և «Սայաթ-Նովա» մշակութային միության նախաձեռնությամբ «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցավ մեծանուն հայ երգչուհուն նվիրված մեծարման երեկո, որն իր ներկայությամբ զարդարեց սիրված



երգչուհին:

«Աստղով եկա» խորագիրը կրող համերգից առաջ տեղի ունեցավ «Սայաթ-Նովա» աշուղական անսամբլի ղեկավար, ՀՀ վաստակավոր արտիստ Թովմաս Պողոսյանի մամուլի ասուլիսը:

– Օֆելյա Համբարձումյանը մեր ժամանակների ամենամեծ երգչուհին է և, իրավամբ, հայոց ազգային երգի թագուհին: Նա թագուհի էր և անցյալում, թագուհի է այսօր ու կմնա նաև ապագայում: Նրա ժամանակակիցներից շատերը փորձեցին նմանվել նրան, բայց երգչի ամենամեծ արժանիքը նրա ինքնատիպությունն է: «Աստղով եկա». այսպես է կոչվում աշուղ Շահենի երգերից մեկը, որի առաջին կատարողը եղել է Օֆելյա Համբարձումյանը: Հիրավի, նա աստղով եկավ հայ երգի անդաստան, աստղով մնաց և հավերժ կմնա, – նշեց Թովմաս Պողոսյանը և ափսոսանք հայտնեց, որ այսօր եթերում չեն հնչում նրա երգերը, երիտասարդները նրան չեն ճանաչում:

Մեծարման երեկոյի նպատակն էր վերհիշել երգչուհու անցած ճանապարհն ու կարևորել հայ երգարվեստում նրա բացառիկ դերը:

– Օֆելյա Համբարձումյան-աստղը երկար տարիներ փայլել է հայ երգի ասպարեզում: Ժողովուրդը դեռ կծնի Օֆելյա Համբարձումյանի նման երգչուհիներ, պարզապես ժամանակները պետք է բարենպաստ լինեն. դա նաև մեզնից է կախված: Շոու-բիզնեսը հաղթեց, մեծերին թողեցին մյուս մայթին: Հանդիպակաց մայթով քայլում է շոուն, ոչ թե արվեստը, – ցավով փաստեց Թովմաս Պողոսյանը:

– Այն սերը, որ մարդիկ տածում են իմ նկատմամբ, ինձ համար թե՛ պատասխանատվություն է և թե՛ հաճույք: Ես այսօր ներկայացել եմ ունկնդրի կարգավիճակով: Միշտ հաճույքով եմ ներկա գտնվում ժողովրդական, գուսանական համերգներին, հատկապես Թովմաս Պողոսյանի և նրա անսամբլի միջոցառումներին, – ասաց Օֆելյա Համբարձումյանը:

Համերգի ժամանակ «Սայաթ-Նովա» աշուղական անսամբլը կատարեց Համբարձումյանի երգացանկի ստեղծագործությունները, նրան նվիրված բազմաթիվ երգեր: Ցուցադրվեցին նաև մեծանուն երգչուհու տեսահոլովակները: Օֆելյա Համբարձումյանը հիշեց գուսան Շահենի «Աստղով եկա» շատ գեղեցիկ երգի իր առաջին կատարումը և դահլիճից անսամբլի հետ մի երգ կատարեց՝ գեղեցիկ անակնկալ մատուցելով հանդիսատեսին:

Ռոզա ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ժողովրդական առածն է ասում. «Խրատը բիզ չէ, որ գլուխը խրեն»:

Ոսկե օղ եւ գոհարեղեն է իմաստունի խրատը՝ լսող ականջի համար:

Սողոմոն ԻՄԱՍՏՈՒՆ



Ատամը հանելիս անզգայացնող են ներարկում: Մինչդեռ մարդու հոգին երբեմն հանում են ... առանց անզգայացնելու:

Գրի առա դեսից դենից

Մերօրյա բանահավաքի անկյուն

Ավանդացույց

Նառը ծանր տնքում էր: Էլ ճար չուներ: Քարավանապետը ահեղ արտասվում էր.

– Ինձանից նեղացած ես հեռանում:

– Այո, – տնքում է Նառը:

– Որ քեզ սոված եմ պահել:

– Ոչ, դրա համար չէ:

– Որ քեզ ծարավ եմ պահել:

– Ոչ, դրա համար էլ չէ: Անմեղ տեղս մտրակել ես, կրկնակի անգամ ավել բեռ ես բարձել վրաս, անքեն տարել եմ, բայց ... դրանից էլ չեմ նեղացել:

– Բա ինչի՞ց ես նեղացած, – թախծագին հարցնում է քարավանապետը:

– Հիշու՞մ ես, որ մի անգամ հիվանդ էի, դու էշին իմ առաջը գցեցիր, որ ճանապարհ ցույց տա ինձ: Այ սրա համար եմ նեղացել, – ասում է Նառն ու ավանդում հոգին:

Սպարպակ Մաթոսյան
Լոռու մարզ, ք. Սպիտակ

Ուսանելի երկտողեր

Մարդ ջարդելով դու մի անցիր,
Ընկնող մարդկանց հենակ դարձիր:

Դու մի հրճվիր մարդ գռփելով,
Այլ մտածիր՝ մարդ սիրելով:

Ձեռքերդ միշտ շփիր հողով,
Ոչ թալանած անարգ փողով:

Նորայր Արզումանյան
Տավուշի մարզ, գ. Բերքաբեր

Կյանքում ամենաբարդը շիտակ ապրելու կամքն է:

Մեր օրերում մեկը ուտելով է տրաքում, մյուսը նայելով:

Էջը կազմեց՝ Լեւոն ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Գծանկարը՝ Սողոմոն ԻՄԱՍՏՈՒՆ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՍ ԴԱՐ

Սիրավան Սևունու (Վլադիմիր Վարդանյանի) հետ կեսդարյա ծանոթության, մտերմության, ընկերության պատմությունը լի է հարուստ ու հետաքրքիր անցյալով ու ներկայի իրական բազմաթիվ անակընկալներով: Դեռևս 1960-ական թվականներին Երևանի պետական համալսարանում ուսանելու տարիներից, ես նրա մոտ տեսել ու զգացել եմ գրականության, մամուլի ու արվեստի նկատմամբ ունեցած նվիրական մոտեցումները, նրա ակտիվ գործունեությունը նշված ոլորտում:

Հետաքրքրությունների ծավալային նրա ոգևորությունն ու գործունեությունը միշտ եղել է մեր ընկերների և հատկապես համակուրսեցիների ուշադրության կենտրոնում: Երևան-Սուխումի իմ բազմաթիվ ուղևորությունների ժամանակ ավելի եմ ճանաչել նրան և գնահատել նրա հայրենասիրական ոգին, նրա բարձր մարդկային արժանիքները, նվիրվածությունը բարեկամների ու ընկերների նկատմամբ: Նա ապրում էր Սուխումիում, բայց սովորում էր Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի բաժնում: Սովորում էր և միևնույն ժամանակ աշխատում ու ստեղծագործում:

Նրա գրական գործունեությունն ամփոփված է հարյուրավոր հոդվածներում և իր հեղինակած 14 գրքերում, որոնք ինձ գրավել են արծակ, թե չափածո գրական և բարբառային լեզվական զվարճալի ու հետաքրքիր պատմություններով: Ճիշտ է, դրանք գրված են և ունեն սոցիալական, քաղաքական, կենցաղային, անձնական մոտիվներ, բայց հետաքրքիր են ընթերցողի համար: Հավատարիմ մնալով ազգային գրականության ակունքներին ու ավանդույթներին, նա կարողացավ



հայրենիքից դուրս, օտարներին ներկայացնել հայկական քնարերգության, կենցաղային, հումորիստական պատմություններ, ակնարկներ և տարբեր ժանրի ստեղծագործություններ: Նրա գրվածքները ռուսահայ շրջանակների համար օգտակար և բարոյական նշանակություն ունեցող ստեղծագործություններ են:

Սիրավան Սևունու բոլոր գրքերին ծանոթ եմ, կարդացել եմ շատ ուշադրությամբ ու զգացել հայոց լեզվի ու գրականության նկատմամբ նրա նվիրական վերաբերմունքը, նրա ապրումներն ու հոգսերը: Ժամանակակից Սփյուռքի համար նրա ժողովածուներն անհրաժեշտ են: Մարդկանց ոգևորելու, նրանց հայրենասիրության զգացումները պաշտպանելու գործում Սիրավան Սևունու գրվածքներն արժեքավոր են: Պետք է ընդունել մի ճշմարտություն, որ յուրաքանչյուր գիրք գտնում է իր ընթերցողին և յուրաքանչյուր ընթերցող գտնում է իրեն հետաքրքրող հեղինակին ու գրքերին:

Սևունին խորամուխ լինելով ազգային արժեքների անցյալի ու ներկայի պատմության մեջ, իր ստեղծագործություններում մնացել է հայ և հայի հոգեբանությամբ էլ գրում է իր գրքերը:

Սևունու գրքերում իշխում է նաև հրապարակախոսական ոճը, որն ուղեկցվում է երգիծանքով: Նա քննադատում է ագահների գայլային ախորժակը, լկտի գործելակերպը: Այդ ամենն անում է մեղմ և սիրալիր տոնով, որի արդյունքում ընթերցողի մոտ ժպիտն իր նպատակին հասել է: Ասածիս լավագույն օրինակը «Անլեզու ցավեր» ժողովածուն է:

Սևունին իր գրվածքներով հաստատել է, որ ինքն իր հողին ու ծննդավայրին նվիրված հայորդի է: Ճիշտ է, նա ազգային գրական մթնոլորտից հեռու է, բայց հոգով ու նվիրումով այդ շրջանակներում է: Այնպես որ, նրա գրական գործունեությունն ազգայինից դուրս նաև հայրենասիրական ոգի է ներշնչում օտարների համար:

Ստեղծագործական ամենալավագույն ցանկություններս քեզ, սիրելի ընկեր: Ապրիր ռռողջ և ստեղծագործական կյանքով:

Հարգանքներով՝
Ռոբերտ ԴԱՎԹՅԱՆ
Երևան, նոյեմբեր, 2012 թ.

13 հանճարեղ միտք Բեռնարդ Շոուից

1. Ավելի հեշտ է ապրել կրքոտ, քան ձանձրալի կնոջ հետ: Ճիշտ է, առաջիններին երբեմն խեղդում են, բայց լքում են հազվադեպ:

2. Ազատություն նշանակում է պատասխանատվություն: Ահա թե ինչու են շատերը վախենում դրանից:

3. Կյանքը՝ հաջող թե անհաջող, երջանիկ թե դժբախտ, այնուամենայնիվ արտակարգ հետաքրքիր է:


4. Պիեսի որակը նրա գաղափարների որակն է:

5. Ամբողջ մեծ գրականությունը և արվեստը պրոպագանդա են:

6. Կնոջ ապագան նրա մոտ ձեռքում չէ:

7. Ավելի լավ է կնոջը զայրացնել, քան թողնել, որ ձանձրանա:

8. Ոչ մի տղամարդ, ով այս կյանքում պետք է ինչ-որ կարևոր բան անի, չունի



ոչ ժամանակ և ոչ էլ փող այնպիսի երկար և թանկարժեք որսի համար, ինչպիսին է որսը կնոջ վրա:

9. Կինը ցանկանում է ապրել իր կյանքով, տղամարդը՝ իր, և նրանցից յուրաքանչյուրը ձգտում է մյուսին շեղել ճիշտ ճանապարհից: Մեկը քաշում է դեպի հյուսիս, մյուսը՝ դեպի հարավ, իսկ արդյունքում երկուսն էլ ստիպված թեքվում են դեպի արևելք, չնայած երկուսն էլ տանել չեն կարողանում արևելյան քամին:

10. – Ես նրան հավերժ կսիրեմ:
– Չի՞ կարելի արդյոք ինձ՝ որպես նրա հոր, իմանալ, թե ինչ միջոցներով եք (ֆինանսական) պատրաստվում նրան հավերժ սիրել:

11. Ամուսնությունը հոր և մոր երկարամյա հերոսական աշխատանքն է՝ ուղղված իրենց երեխաներին ոտքի կանգնեցնելուն:

12. Ամուսնությունը միություն է տղամարդու, ով չի կարողանում քնել փակ պատուհանով, և կնոջ, ով չի կարողանում քնել բաց պատուհանով, միջև:

13. Պարը հորիզոնական ցանկությունների ուղղահայաց դրսևորումն է:

Մեր հյուրն է ճանաչված էսսեիստ, թարգմանիչ, լրագրող, ՀՀ գրողների, ՀՀ լրագրողների միությունների անդամ Խորեն Գասպարյանը՝ այս անգամ իր հումորների շարքով



Լուրեր անկախ Հայաստանից

Ստուգաբանում ըստ ուստա Կառլենի

Լոռու մարզպետարանի սոցիալական բաժնի պետ Վալերի Ձադինյանին հարցրի. «Մի դժվար արտաբերելի հապավում կար՝ ԱՀՌԾ: Ի՞նչ էր նշանակում»:

Բացատրելով, որ դա նշանակում էր աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Վալերի Ձադինյանը հավելեց. «Հիմա արդեն հեշտ է արտաբերվում դարձել է ԿԶԾ՝ կայուն զարգացման ծրագիր»:

Օրերս զրուցում էի իմ հարևան Կառլենի հետ: Ասեմ, որ հարևանս հետաքրքիր ոտանավորներ է գրում ժողովրդի դարդուցավի մասին: Օրինակ այս մեկը՝

Թոշակ սպասեցի, էն էլ մեծ բան չէ,
Ոնց որ հունվարին կկուն գա կանչե...

Լսելով նրա բողոք-գանգատները երկրի ու ժողովրդի վիճակից՝ ասացի.

«Գիտե՞ս, արդեն կայուն զարգացման ծրագիր կա. այնպես որ մտածում են այդ վիճակի մասին: Կարճ ձևով այդ ծրագիրը անվանում են ԿԶԾ»:

«Էդ ինչըղ լավ են մտածե», – ասաց հարևանս:

«Հա՞ ... » – հարցրի՝ հուսադրված, որ ուրախացրի նրան:

«Բըը ի՞նչ... Ըշտը ԿԶԾ կնշանակե, օր կգցել են էս ժողովրդին», ստուգաբանեց ուստա Կառլենը:

Սիկտիվկարը՛ որպես ուղիղ ճանապարհ

Երկու հայի զրույցից

– Ախպե՛ր, զզվել եմ էս անտեր երկրից, թողնելու եմ գնամ, ռադս քաշեմ, կորչեմ-պրծնեմ:
– Հա, բայց ու՞ր պիտի գնաս:
– Ես շա՛տ գիտեմ ու՞ր. **Սիկ**տիվկար....

Ըբը մե՞նք...

Գյումրիում, բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի հետ բնակչության հանդիպման ժամանակ, անդրադարձ է լինում համաշխարհային տնտեսական ճգնաժամին: Պաշտոնյան հավաստիացնում է, որ ճգնաժամը շատ չի ազդելու Հայաստանի վրա և հուսադրող խոսք է ասում վերջում.

– Ժողովուրդ ջան, մենք լավ ենք ապրելու:

Ի պատասխան լսվում է.

– Ըբը մե՞նք...

Խաչբառը լավ լուծողական է

Թերթի խմբագրությունում նստած՝ սրբագրիչ Հրանուշի տված խաչբառն էի լուծում: Գագիկ Անտոնյանը ներս մտավ և ասաց.

– Լավ էլ լուծում ես:

– Հա՛, – ասացի, – Հրանուշը լուծողական է տվել, ես էլ իմ հավեսով լուծում եմ:

Ձեռնտու վիճակ

Ձեռքբերումներ ունենալուց հետո նա ձեռք քաշեց ձեռնաքաշությունից:

Լքում

Քանի-քանի հոգի հայրենիքը լքեց,
Քանի-քանի հոգու հայրենիքը լքեց:

Հաց-կերույթ

«Հացներս կերանք», – ասաց հարևանս, երբ իմացավ, որ հացը թանկացել է:

Այդուհանդերձ

Հանդերձյալ աշխարհ գնում են հանդերձով, բայց մտնում են անհանդերձ:

Ակամա (թե կամա) անեկդոտ

Մի օր ինձնից նեղացած մեկն ասաց. «Այսուհանդերձ անունս չհոլովես»:

Ես էլ պատասխանեցի. «Պիտի հոլովեմ սեռական հոլովով»:

Պարզագույն հարց, որին պատասխանելիս սխալվում է ուսանողների 80 տոկոսից ավելին

Ա-ն ու Բ-ն մտան խողովակը, Ա-ն դուրս եկավ, Բ-ն դուրս եկավ, ո՞վ մնաց խողովակի մեջ: Այս հանելուկի սկզբունքն աչքի առաջ ունենալով տնտեսագիտության ոլորտում նոբելյան մրցանակակիր, հոգեբանության պրոֆեսոր Դանիել Կանեմանը իր «Մտածել դանդաղ և արագ» գրքում գրում է, որ նույնիսկ ամենահեղինակավոր բուհերի ուսանողները սխալվում են այն հարցին պատասխանելիս, որին տարրական դասարանի երեխաները շատ արագ և ճիշտ են պատասխանում: Հարցի ձևակերպումները տարբեր են, բայց սկզբունքը բոլոր դեպքերում էլ նույնն է: Հարցը մոտավորապես այսպիսին է. տետրն ու գրիչը միասին արժեն 160 դրամ: Տետրը գրիչից թանկ է 100 դրամով: Ի՞նչ արժե գրիչը:

Այս բանավոր հարցին նույնիսկ Հարվարդի ուսանողները պատասխանում են 60 դրամ: Սակայն եթե փորձենք հաշվել մաթեմատիկորեն, ապա կստացվի, որ եթե գրիչը 60 դրամ է, իսկ տետրը 100-ով ավելի, այսինքն՝ 160, ապա գումարը կստացվի 220, ոչ թե 160: Ճիշտ պատասխանը 30 դրամն է:

Կանեմանը դա բացատրում է այն բանով, որ թվերը հայտնվում են մեր ուղեղում. այս դեպքում այդ թիվը 60-ն է: Դա կոչվում է ինտուիտիվ պատասխան, երբ ուսանողները, այսպես ասած, «ծուլանում են» մտածել:

Այս հարցին պատասխանելիս սխալվել է Հարվարդի, Մասաչուսետի տեխնոլոգիական ինստիտուտի և հեղինակավոր այլ բուհերի ուսանողների 80 տոկոսից ավելին:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

Այբուբեն

Այբուբեն - յուրաքանչյուր լեզվի համար գործածվող տառերի ամբողջությունը՝ ավանդաբար պահպանվող որոշակի դասավորությամբ: Այս հասկացության համար շատ ժողովուրդներ գործածում են **alphabet** (հուն. αλφάβητος) անվանումը, որը կապված է հին հունական այբուբենի առաջին տառերի՝ α-ի αλφα (ալֆա) և β-ի Bήτα (բետա) անվանումներից: Հիշյալ սկզբունքով, այսինքն՝ տառերի ընդունված համակարգի առաջին երկու գրերի անուններով ժամանակի ընթացքում տարբեր ժողովուրդներ կազմել են սեփական անվանումները: Հայերենի այբուբենի անվանումը կազմված է մեր լեզվի ա-ի (այբ) և բ-ի (բեն) անուններից, սլավոններինը համապատասխանաբար **аз** և **буки** անուններից ստեղծվել է **азбука**:

Հայոց գիր – Հնչյունաբանական գրերի համակարգ, որը ստեղծվել է Մեսրոպ Մաշտոցի կողմից հայերենի համար: Գրերի գյուտը տեղի է ունեցել 405 թ.:

Մեսրոպյան այբուբեն

Հայ ժողովրդի մեծահանճար զավակ Մեսրոպ Մաշտոցը հայերեն գրերն ստեղծեց 405 թվականին: Նրա անունով էլ մեր տառերը կոչվում են մաշտոցյան այբուբեն:
Մեսրոպաստեղծ այբուբենը դառնում է հայ ժողովրդի ինքնության ամենամեծ զինանշաններից մեկը:
Հայոց լեզուն ունի 36 հնչյուն և 39 տառ, որոնցից՝ 30-ը բաղաձայն, 6-ը՝ ձայնավոր:
Լեզու սովորող յուրաքանչյուր մարդ առաջին հերթին պետք է իմանա տվյալ լեզվի այբուբենը, որը տառերի դասավորության ընդունված կարգն է, ամբողջությունը:

Ստեղծման նախապատմությունը

Մեսրոպ Մաշտոցը, դժվարությամբ դարձի բերելով Գողթն գավառի ժողովրդին, հասկանում է, որ երկրում տիրապետող կրոնական-պաշտամունքային լեզուներով՝ հունարենով և ասորերենով հնարավոր չէ ժողովրդի մեջ տարածել քրիստոնեությունը. չնայած արդեն 100 տարի էր անցել քրիստոնեության ընդունումից, ժողովրդի մեծ մասը դեռ պահպանում էր հեթանոսական կրոնն ու սովորույթները: Մաշտոցը հասկանում է, որ քրիստոնեության դիրքերը հնարավոր է ամրապնդել միայն այն դեպքում, երբ եկեղեցական արարողակարգը տարվի մայրենի լեզվով՝ հայերենով, իսկ դրա համար անհրաժեշտ էր սեփական գրերի գոյությունը: Իր մտքերով նա կիսվում է Սահակ Պարթևի հետ, և պարզվում է, որ կաթողիկոսը նույնպես այդպես է կարծում: Նրանք գումարում են ընդհանրական ժողով, որը միահամուռ հավանություն է տալիս հայերենի այբուբեն ստեղծելու նրանց ծրագրին: Քաջալերելով նրանց ծրագիրը՝ Վռամշապուհ թագավորը ասում է, որ Դանիել անունով մի ասորի եպիսկոպոս «հանկարծ գտել է» հայոց լեզվի նշանագրերը: Այդ նշանագրերը հայագիտության մեջ հայտնի են Դանիելյան գրեր անունով: Ոգևորված դրանով՝ Մաշտոցը սկսում է սովորեցնել այդ նշանագրերը հայոց իշխաններին, բայց շուտով պարզվում է, որ դրանք թերի են և չեն համապատասխանում հայերենի հարուստ հնչյունային համակարգին: Այդ պատճառով էլ նա ձեռնամուխ է լինում Հայոց գրերի ստեղծմանը:

Հայոց գրերի ստեղծումը

Վերցնելով մի խումբ աշակերտներ՝ Մաշտոցը մի մասին ուղարկում է այն ժամանակի հունական դպրության կենտրոններից մեկը՝ Սամոսատ, մյուսներին տանում է իր հետ՝ Եդեսիա: Եդեսիայի հարուստ դիվանատանը նա հետազոտում է տարբեր լեզուներով գրքեր, ուսումնասիրում է դրանց այբուբենները: Ըստ ավանդության՝ նա մի պահ հայացքը թեքել է այն մագաղաթի վրայից, որի վրա գրում էր, և նկատում է մի ձեռք (Աստծո ձեռքը), որը ձախից աջ գրում էր այբուբենի տառերը. հենց դա էլ հուշում է, որ հայերենի գրության համակարգը պիտի լինի հենց այդ՝ հունարենին բնորոշ ուղղությամբ: Սակայն այժմ հայտնի է, որ դրանում ոչ մի միստիկ կամ աստվածային բան չկա. բանն այն է, որ երբ մարդը երկար ժամանակ լարված նայում է մի բանի, աչքերը փակելիս կամ հայացքը այլ կողմ թեքելիս այդ նույն առարկայի պատկերը երևում է նրա դիմաց, օրինակ՝ երբ մարդը երկար ժամանակ նայում է արևին, հայացքը թեքելիս կամ աչքերը փակելիս տեսնում է փոքր արևային սկավառակներ: Նույն կերպ էլ եղել է Մաշտոցի հետ, երբ նա տևական ժամանակ լարված նայել է մագաղաթին: Գյուտից հետո Մաշտոցը գնում է Սամոսատ, որտեղ հանձնարարում է Հռոփանոս անունով մի հույն գեղագրի ձևավորել իր ստեղծած տառերը: Այնտեղ էլ նա թարգմանել է «Առակաց գրքից» 1-ին հայերեն նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (« Ճանաչել իմաստությունը և խրատը, իմանալ հանճարի խոսքերը »):

Գրերի ստեղծման բարդությունը

Մաշտոցի առաջ ծառացել էին մի շարք դժվարություններ: Նախ՝ հայերենը ուներ շատ բարբառներ՝ իրենց հատուկ առանձնահատկություններով: Նա ծանոթ պիտի լիներ գոնե Տարոնի (որտեղ ծնվել էր), Սյունիքի ու Գողթնի (որտեղ քարոզել էր) և Այրարատի (որտեղ ծառայել էր արքունիքում) բարբառներին: Հարց էր ծագում՝ այս բարբառներից ո՞րը ընտրել իբրև հիմնական և նրա համար ստեղծել գրեր: Պե՞տք էր արդյոք մյուս բարբառների հատուկ հնչյունների համար, որոնք հիմնականում բացակայում էին, ստեղծել հատուկ նշանագրեր: Պե՞տք էր արդյոք ձայնավորները արտահայտել հատուկ տառերով՝ հունարենի նման, թե՞ վերև դրված նշաններով՝ ինչպես ասորերենում: Պե՞տք էր գրել աջից ձա՞խ ասորերենի նման, թե՞ ձախից աջ՝ ինչպես հունարենում: Տառերի ձևերն ու անունները վերցնել հունարենից, թե՞ ասորերենից: Թե՛ հունարենը, թե՛ ասորերենը ունեին երկար և կարճ ձայնավորներ. արդյոք հայերե՞նն էլ ունի, և եթե այո, ի՞նչ կերպ պետք է արտահայտվեն դրանք: Եվ վերջապես՝ ո՞ր լեզուն ընտրել որպես գաղափար ու պլատֆորմ՝ հունարենը, թե՞ ասորերենը: Ինչպե՞ս դասավորել այն հայերենի հնչյունները, որոնք չկան ո՛չ հունարենում, ո՛չ ասորերենում: Սրանք ընդհանուր բնույթի հարցեր էին: Գալիս էին ապա մի շարք մասնավոր և առավել դժվար բնույթի հարցեր: Հույները գրում էին ίαχωβ, αις (կարդացվում է՝ Իաքոբ, աիս): Պե՞տք էր արդյոք հայերեն եւս այդպես գրել (Իակովբ, աիս), թե՞ անհրաժեշտ էր ստեղծել հատուկ գիր (Յակովբ, այս): Հունարենում «**h**» հնչյունը արտահայտելու համար գիր չկար, իսկ նրա փոխարեն օգտագործվում էր « ʼ » նշանը, որը դրվում էր ձայնավորի վրա: Պե՞տք էր նրանց հետևել, թե՞ անհրաժեշտ էր այդ հնչյունի համար հատուկ գիր ստեղծել: Հույները չունեին « **յու** », « **յա** » հնչյունները, որոնք կային հայերենում: Պե՞տք էր արդյոք այդ հնչյունների համար հատուկ գրեր ստեղծել, թե անհրաժեշտ էր արտահայտել իբրև երկհնչյուններ, և եթե այո, ապա ինչպես՝ յու, յա (հյուր, կյանք), թե՞ իւ, եա (հիւր, կեանք): ւ գիրը, որը Մաշտոցը դրեց հունական y-ի դիմաց, բազում թյու-րիմացություններ էր ծագեցնում՝ մե՛կ իբրև բաղաձայն հնչելով, մե՛կ իբրև ձայնավոր (թիւր (կարդացվում է՝ թյուր), թիւ (կարդացվում է՝ թիվ)): «**Վ**» հնչյունը նույնպես տագնապեցրել է Մեսրոպին՝ վազ և ավազ, վան և ավան. արդյո՞ք պետք է միակերպ գրել (վազ, բայց՝ աւազ. վան, բայց՝ աւան): Հույները մի «**ռ**» ունեին. արդյոք պե՞տք էր բավականանալ մեկով, թե՞ հայերենում առկա նուրբ «**ռ**»-ի համար նոր գիր ստեղծել («**ր**»), մանավանդ, որ անգամ նույն բառի մեջ բառակազմության ժամանակ այս հնչյունները փոխակերպվում են (դուռ + -ունք = դրունք): Հունարենի **Λ**-ի դիմաց դնելով «**ղ**» (այս տառը այն ժամանակ կարդացվում էր նուրբ «**լ**», բայց ոչ այժմվա պես «**ղ**»)՝ նա ստեղծեց նաև հատուկ գիր կոպիտ «**լ**»-ի համար (այժմյան լ-ն): Շրթնային, լեզվային և կոկորդային թավ հնչյունները պե՞տք էր արտահայտել տառակապակցություններով՝ ինչպես լատիներենում (**ph, th, kh**), թե՞ հունարենի պես մի տառով (այժմյան **փ, թ, ք**): Հունարենի **Χ**-ի դիմաց դնելով «**ք**»՝ նա նպատակահարմար գտավ ստեղծել գիր նաեւ «**խ**» հնչյունի համար՝ այժմյան «**խ**» տառը: Անհրաժեշտ էր նաև գտնել սկզբնափակ լեզվաշրթնային հնչյունները, որոնք չկային հունարենում, և նրանց համար ևս գրեր ստեղծել (**ծ, ձ, ց, ճ, ջ, չ** հնչյունները):

Պարույր ՍԵՎԱԿ

ԵՎ ԱՅՐ ՄԻ ՄԱՇՏՈՑ ԱՆՈՒՆ

Այո՛, մենք կայինք Նրանից առաջ:

Սակայն աշխարհի լայնքի վրայով
Մի չտեսնված մրրիկ էր անցել:

Հրեա մի գունատ՝
Քշված իր երկրից,
Օտարականի ու հյուրի տեսքով,
Ինքն իրեն տարավ աշխարհից-աշխարհ:

Զորավոր էին Աստվածները հին,
Այնքան զորավոր,
Որ չէին ստում:

Իսկ խեղճ ու աղքատ այդ եբրայեցին
Եկավ շաղ տալու խոստումներ օդում,
Եկավ զինավառ գեղեցիկ ստով...

Միամիտ էին Աստվածները հին,
Միամիտ այնքա՛ն,
Որ ծարավ իրենց հագեցնում էին
լոկ արյամբ զոհի
Եվ իրենց քաղցը՝ նույն զոհի մսով:

Իսկ եբրայեցին եկավ ասելու.
«Այս է մարմինն իմ, առեք ու կերեք:
Այս է արյունն իմ, ըմպեցեք սիրով»...

Ուղղամիտ էին Աստվածները հին,
Ուղղամիտ էին՝
Պարզ դերձակի պես.
Իրենց հավատի հանդերձը նրանք
Միշտ ձևում էին ճիտ կյանքի վրա:

Իսկ եբրայեցին եկավ կարելու
Մի համընդհանուր-կախարդիչ
հանդերձ,
Որով պիտի որ հավասարվեին
Ե՛վ վտիտ ու գեր,
Ե՛վ հաստ ու բարակ…

Ճշտախոս էին Աստվածները հին,
Ճշտախոս էին՝
Երեխայի պես.
Մարդկանց մարդ էին նրանք անվանում,
Իսկ իրենց՝ աստված:

Իսկ եբրայեցին ասաց. «Մարդ եմ ես»,
Եվ... դարձավ աստված՝
«Մարդ եմ» ասելով...

...Զորավոր էին աստվածները հին,
Այնքա՛ն զորավոր,
Որ անկեղծ էին ու չէին ստում:
Իսկ պատմության մեջ
կան ժամանակներ,
Երբ ով չի ստում՝ պիտի կործանվի՛...

Եվ կործանվեցին աստվածները հին:

Մարդիկ,
Որ երեկ ունեյին տարբեր
աստվածներ բազում,
Պարտավոր էին հիմա ունենալ
Միայն մի՛ աստված,
Բոլո՛րը՝ լոկ մի, միայն մի՛ աստված:
Եվ չգիտեին,
Թե ո՛վ է այդ Մին
Եվ ի՞նչ է ուզում...

Արամազդների, Միհրերի տեղակ,
Բոցբեղ-բոցմորուք շեկ Վահագներին
փոխարինելու
Եկավ մի հրեա սևմորուք-սևբեղ,
Եվ Աստղիկների, Անահիտների
ու Նանեների
Երեկվա տեղում այսօր հաստատեց
Իր մորը դալու՜կ, թե՛ ամոթահար:
Եվ խոսում էին նրանք մի լեզվով ,
Որ չէր հասկացվում:

Մեհյանների տեղ ու բագինների,
Նրանց դեռ տաք-տաք մոխիրի վրա,
Հասակ նետեցին
Դեռևս անձև և փայտակտուր
աղոթատեղիք
Իրենց խաչերը սուր մխրճելով
Նախ՝ սրտերի՝ մեջ,
Ապա՝ երկնքի՛...
Ատրուշանների խուրձ-խուրձ բոցերի
առատության տեղ
Կենտ-կենտ հասկերի չար
աղքատությամբ
Պաղ-պաղ մոմերն են ուզում դառնալ
հաց մի նոր հավատի,
Որ իրեն կոչում կամավորություն,
Բայց տարածվում է բռնությամբ անքող…

...Առանց հավատի կյանքում դյուրին չէ
նույնիսկ մեռնելը,
Իսկ ապրելն...արդեն անկարելի է:

Մարդուց խլեցին իր հավատը հին,
Իսկ հավատը նոր հաստատվեց խոսքո՛վ,
Մի՛ միայն խոսքով,
– Դեռ նորը չկա՛ր:

Ավերվեց հինը ու փլատակվեց,
Իսկ նորը միայն կառուցվեց խոսքո՛վ,
Մի միայն խոսքո՛վ.
– Դեռ նորը չկա՛ր:

Եվ այսպես՝
Հանկարծ ու դանդաղորեն
Ամե՛ն ինչ շրջվեց,
Տակն ի վեր եղավ,
Եվ կարգի բերել չէր կարող ոչ ոք.
-Ինքը շրջողն իսկ չէ՛ր կարող էլ, չէ՛:

Եվ այսպես՝
Կյանքից մնաց մի «մեղա»,
Որ պիտի նաև...բարձր չհնչեր:
Եվ այսպես՝
Անցավ ողջ հարյու՜ր տարի,
Որ կարճ է թվում, երբ գիրք ես կարդում,
Իսկ երբ ապրում ես և ամեն րոպե
Զգում ես մաշկի՛դ, զգում ես սրտո՛վ,
Ուղեղիդ բոլո՛ր ծալքերով՝ այնժամ…

Հենց այսպես էինք մենք ապրում այնժամ:

Հայաստան կոչված աշխարհին էլ արդեն
Լոկ անունով էր Հայաստան կոչվում:

Խաչիկ ԴԱՇՏԵՆՑ

ԹԵ ՄՆԱՅԻՆՔ ՀԵԹԱՆՈՍ

…Ի՞նչ գործ ուներ Քրիստոս,
Հեզությունը մեզ խաչող,
Ոչ խունկ ուներ,ոչ սաղմոս,
Ոչ շարական աղաչող:
Բագին լիներ մեզ փարոս,
Մեհյան լիներ Աստղիկի,
Թե լինեյինք հեթանոս,
Այսքան չէինք մորմոքի:
Եվ ի՞նչ տվեց անամոթ,
Սուտ Եհովան մեր ազգին…
Անվերջ օգնեց թշնամուն,
Անվերջ զարկեց մեր բազկին,
Հարկավոր չէ Թադևոս,
Ոչ էլ Հիսուս Քրիստոս,
Բագին լիներ մեզ փարոս,
Օ՛, մնայինք հեթանոս:

ՍԻԱՄԱՆԹՕ

Քսան դարու
Քու վրեժդ թող որ այսօր ես լուծեմ,
Ո՛վ Աստվածուհի՛դ Անահիտ:
Ահավասիկ քու բագինիդ
կրակներուն մեջ նետեցի
Իմ խորտակված խաչափայտիս
երկու թևերը թունավոր:
Եվ ցնծա դուն, ո՛վ Ոսկեմայր,
Լուսավորչի կողերեն, ժանտ ոսկոր մը
քեզ կծխեմ…

Սվետլանա ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԵՐՍ...

Թե կա սեր, կա և՝ հիասթափություն,
Բայց ինչի՞ց է որ՝ այսպես ամուր եմ,
Ամուր եմ սիրում քեզ՝
Ճ Շ Մ Ա Ր Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն...

Կյանքի Գողգոթան անցա տանջալից,
Լոկ քո պատճառով ու լոկ՝ քեզ համար,
Այսքանից հետո, դու՝
Ճ Շ Մ Ա Ր Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն,
Էլի ու էլի՝ թանկ ես բոլորից...

04.01.2013 թ.

Հանրապետական փառատոնի հաղթող ջութակահարը ուզում է իրականացած տեսնել անվանի պապի երազանքը





Արմավիրի մարզում ավարտվեց հանրապետական միջմարզային մշակութային մրցույթ փառատոնը, որին մասնակցեցին բոլոր մարզերից երաժիշտ կատարողներ, երգիչներ, երաժշտական համույթներ: Յոթ անվանակարգերից երեքում հաղթող ճանաչվեցին լոռեցիները: «Ժողովրդական գործիքների լավագույն կատարում» անվանակարգում ելույթ ունեցավ նաև դուդուկահար, Վանաձորի Թավրիզյանի անվան արվեստի քոլեջի դուդուկի դասատու, «Հորովել» երգի-պարի համույթի դուդուկահար, միջազգային մրցույթի ոսկե մեդալակիր Վլադիմիր Կռոյանը, ում ժողովրդական երգերի կատարումները գերեցին ժյուրիի անդամներին, և նրանք առաջին մրցանակին արժանանալու պատիվը տվեցին նրան:

Վլադիմիր Կռոյան անուն-ազգանունը ծանոթ է հանրապետության երաժշտասերներին. այս տաղանդաշատ երիտասարդ դուդուկահարին փոխանցվել է ոչ միայն հայտնի դուդուկահար, դուդուկահարների Անդրկովկասյան մրցույթի դափնեկիր, միջազգային մրցույթների բազմակի հաղթող, կառավարական շքանշանների, պարգևների ու շնորհակալագրերի արժանացած պապի՝ Վլադիմիր Կռոյանի (հայտնի է Մեր Լադոն անվամբ) անուն-ազգանունը, այլև ձիրքն ու շնորհքը, երաժշտական հրաշք գործիքի նկատմամբ գեներով եկած սերն ու նվիրվածությունը: Համեստ երիտասարդը, որ մրցանակներ շատ է տեսել և էլի կտեսնի, այս մեկը երախտագիտորեն նվիրեց իր առաջին ուսուցիչ, երաժշտության ասպարեզի իր հաջողություններում այսօր էլ զգալի ավանդ ունեցող մեծավաստակ երաժիշտ պապին, ում ծննդյան 85-ամյակը լրացավ փառատոնի անցկացման օրերին: Մեր զրույցի ընթացքում էլ լրագրողիս, որպես նվիրական գաղտնիք, հայտնեց, որ ցանկանում է իրականացված տեսնել հարազատ պապի երազանքը, այն է՝ մի մեծ դահլիճում արվեստի երկրպագուների առջև ելույթ ունենալ թոռի և դարձյալ ապագա ունեցող դուդուկահար, 12-ամյա ծոռի՝ Վահան Սոֆյանի հետ միասին, ով չնայած պատանի հասակին, միջազգային մրցույթի դափնեկիր է, Հայաստանի պատանի երաժիշտ-կատարողների «Նոր անուններ» ասոցիացիայի անդամ, «Նոր անուններ» միջազգային մրցույթի դիպլոմակիր (սովորում է Վանաձորի թիվ 20 դպրոցում, Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի ժողգործիքների բաժնի 3-րդ դասարանում): Այնպես որ, նա ևս ամոթահար չի անի: Թոռը, ինչպես նաև վաստակաշատ դուդուկահարի դուստր Էլմիրա Կռոյանը, ով ևս ողջ կյանքում նվիրյալ երաժիշտ է և բազում տարիներ «Հորովել» երգի-պարի համույթի երաժշտական մասի ղեկավարն է, հիշատակված քոլեջի ժողգործիքների բաժնի դասախոս, համոզված են՝ այդպիսի եզակի համերգի անցկացումն, իրոք, նորություն կլինի, հնարավոր է կազմակերպել, կկազմակերպվի գարնանը: Հանդիպեցի ավագ Կռոյանին. 85-ամյա իմաստուն այրը եռանդով լի է, վճռական: «Ես կարող եմ, պարտավոր եմ մասնակցել նման համերգին, – խոստացավ նա, ավելացնելով, – «մեր սիրելի Ջիվան Գասպարյանին է հաջողվել համերգ ունենալ որդու հետ: Դեռ ոչ մեկին բախտ չի վիճակվել համերգ տալ շնորհաշատ ժառանգների՝ թոռի և ծոռի հետ: Իմ երազանքն է, կարծում եմ՝ համերգը կկայանա, լավ էլ կընդունվի»: Մնում է ավելացնել, որ նա այսօր էլ «շարքերում» է, ունի բազմաթիվ աշակերտներ, կրթում և դուդուկի վարպետությունն էլ սաներին փոխանցում է՝ դեռ աշխատելով արվեստի պետական քոլեջի դուդուկի բաժնում: Դուդուկի վարպետը վստահ է՝ Լոռին դուդուկահարների պակաս չի ունեցել, չի էլ ունենա, դուդուկի նկատմամբ սերն անհրաժեշտ է միշտ վառ պահել, ինչն ինքը՝ նվիրումով, գործով՝ ձգտել է կատարել ողջ կյանքի ընթացքում:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ,

Լուսանկարը՝ հեղինակի

Ի՞նչ է երկքաղաքացիությունը

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի է համարվում այն անձը, որը ՀՀ քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (երկրների) քաղաքացիություն:

ՀՀ երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես ՀՀ քաղաքացի: Սույն նորմը տարածվում է նաև 1995 թվականի հունվարի մեկից հետո, առանց սահմանված կարգի ՀՀ քաղաքացիությունից միակողմանի հրաժարված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա:

ՀՀ երկքաղաքացին ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է ՀՀ քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացին այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում պարտավոր է այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, մեկամսյա ժամկետում, հայտնել ՀՀ ոստիկանության ԱՎ վարչություն կամ ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներին, իսկ օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններին: Ժամանակին չհայտնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն 50.000 դրամի չափով:

ԱՊՊԱ-ով Հայաստան և վերջ

(ֆելիետոն)

Ու՛խ, վերջապես տեղի ունեցավ ՀՀԿ արտահերթ համագումարը, ու մեր նախագահն իր ելույթով շատերի «պորտը տեղը դրեց»: Բա ո՞նց, նախագահ ունենք, աշխարհը չունի:

Հաջորդ օրն իսկ, դեկտեմբերի 15-ին, դուրս եկա տանից ու զարմանքից բերանս բաց մնաց. մարդիկ, որ դեռ երեկ մտախոհ, տխուր, մոլորված, նյարդային, գլխահակ էին քայլում, հիմա՝ ժպտերե՛ս, ուրա՛խ, երջանի՛կ... «Կարո՞ղ է երազ եմ տեսնում», - մտածեցի, ձեռքս տարա, որ ինձ կսմթեմ, բայց հանկարծ հիշեցի՝ ախր ասված է. «Բացվող ամեն մի նոր օրը պետք է տարբերվի նախորդից՝ լինելով ավելի լավը»:

Եվ կատարվել էր հրաշքը:

Մեկ էլ մայթեզրին արգելակեց հանրահայտ օլիգարխ Սեթոյի «Ջիպը»: Նա անմիջապես իջավ մեքենայից ու մոտեցավ.

– Բարև ձեզ, Դուք Ձեզ վա՞տ եք զգում, ինչո՞վ օգնեմ...

Ա՛յ քեզ բա՛ն, էս բռին ե՞րբ հասցրեց սովորել հայոց լեզվի անձնական դերանունների երկրորդ դեմքի հոգնակին: Բայց այդ պահին հիշեցի, որ ասված է. «Հայաստանի քաղաքացու հետ պետք է Դուք-ով խոսել»:

Եվ կատարվել էր հրաշքը:

– Չէ՛, – ասացի, – շնորհակալ եմ, շարունակեք Ձեր ճանապարհը:

Եվ մինչ Սեթոն լուսացույցի կարմիր լույսի տակ սպասում էր կանաչին, ինձ մոտեցավ մեր հարևանի տղան.

– Դուք անձամբ ճանաչո՞ւմ եք պարոն Սիսակյանին, – հետաքրքրվեց նա:

– Պարոն Սիսակյա՞նն ով է:

– Պարոն Սեդրակ Սիսակյանը, ով քիչ առաջ մոտեցավ Ձեզ:

– Ա՛խ, Սեթո՛ն... Ո՞նց չեմ ճանաչում, երեկ քիչ մնաց ինձ ավտոյի տակ գցեր, հազիվ արգելակեց ու հայհոյանքի տարափ տեղաց, մի բան էլ ես պարտք մնացի:

– Մի՞թե նախկինում այդպիսի բաներ են կատարվել, – զարմացավ պատանին, և ես այդ պահին հիշեցի, որ ասված է. «Նոր սերունդն անպատժելիության այլևս հանդիպելու է միայն ծնողների հուշերում»:

Եվ կատարվել էր հրաշքը:

– Էդ ի՞նչ լուսանկար է ձեռքիդ, – հետաքրքրվեցի:

– Հորս նկարն է, – ասաց տղան, – ախր ես նրան չեմ հիշում: Ռուսաստանից վերադարձել է, գնում եմ կայարան, նկարով ճանաչեմ, տուն ուղեկցեմ:

– Ինքը չէր կարո՞ղ տուն գալ:

– Տան տեղը չի գտնում, – բացատրեց տղան, – զանգահարեց, թե՝ եկեք ինձ տուն տարեք:

– Աչքդ լույս, – բարեմաղթեցի և հիշեցի, որ ասված է. «Վստահեցնում եմ ձեզ, որ ընդամենը մի քանի տարի Հայաստանից դուրս եկած մեր հայրենակցի համար Հայաստանն անճանաչելիորեն փոխվել է»:

Եվ կատարվել էր հրաշքը:

Ուրախությունից ու հպարտությունից սիրտս ճողփաց, շտապեցի տուն՝ կնոջս էլ երջանկացնեմ:

Վերելակի մոտ դրկից հարևանս՝ ազգությամբ եզդի Խդոն էր սպասում՝ ձեռքին լոտոյի տոմսակ:

– Բա դու երդվել էիր, որ լոտո չառնես, – զարմացա ես:

– Ա՛յ ախպեր, – ժպտաց Խդոն, – քեզանից ինչ թաքցնեմ, ամեն օր տելևիզորով, ռադիոյով հաղորդում էին, թե՝ հայերը խաղում են հայ-լոտո, ես էլ մտածում էի, որ ինձ չի կարելի խաղալ: Բայց երեկ, երբ ասվեց, թե՝ «Սա այստեղ ապրող բոլոր ազգերի, բոլոր քաղաքացիների համար պատասխանատու Հայաստան է», հասկացա, որ կատարվել է հրաշքը:

Ուրախ տրամադրությամբ թակեցի դուռը՝ երգելով.

– Սա՛ է մեր վերջին կռի՛վը և պայքարը մե՛ծ...

Կինս ապշած ինձ նայեց.

– Էդ Նոյի թվի երգը որտեղի՞ց հիշեցիր...

– Ի՞նչ Նոյի թիվ, այ կնիկ, բա չգիտե՞ս, որ ասված է. «Մենք դեռ կռիվ ունենք տալու: Եվ սա մեր վերջին կռիվն է»:

Համակարգչով շախմատ խաղացող տղաս վրա բերեց.

– Նաև ասված է՝ «Արդեն սկսում ենք էնդշպիլը»:

– Ի՞նչ էնդշպիլ, այ տղա:

– Դպրոցում՝ շախմատի դասին ենք անցել, վերջնախաղը՝ էնդշպիլն է: «Ասված է. «Արդեն սկսում ենք վերջնախաղը: Հաղթական վերջնախաղը»: Այսինքն՝ էնդշպիլը, հետո էլ շախ ու մատ:

– Վախենում եմ տառասխալ լինի, – բարձրաձայն մտորեց կինս, – կարո՞ղ է, ասած լինի՝ ԱՊՊԱ-ով Հայաստան, մենք «ապահով» լսած լինենք:

– Է՛, – նեղսրտեցի ես, – չիմացա՞ր, որ ավտոյի դիմապակու վրա անգամ էդ ԱՊՊԱ-ի կտրոնը փակցնելն արդեն պարտադիր չի:

– Ես էլ էդ եմ ասում, էլի: Ավտոյից հանեցին, ժողովրդի վրա են կպցնում:

Կնոջս ձայնը խլացավ միջանցքի աղմուկից: Անհանգստացած դուրս եկա, տեսնեմ Խդոի ընտանիքը հարայ-հրոցով պարում է, իսկ Խդոն կոկորդով մեկ գոռում է.

– Շահել ե՛մ, ավտո եմ շահել և վեե՛րջ...

Եվ կատարվել էր հրաշքը:

Սամվել ԽԱԼԱԹՅԱՆ

Հայկական առակն ուսուցանում է.

1

Ճնճղուկները երամով գնացին արագիլի մոտ և աղաչելով ասացին նրան.

– Թույլ տուր մեզ ձագեր հանելու քո բույնի մեջ և պաշտպանիր մեր ձագերն օձերից:

– Ինձ ի՞նչ կանեք, - ասաց արագիլը, - որ կատարեմ ձեր կամքը:

– Կաղոթենք, պատասխանեցին ճնճղուկները, որ ձեր ձագերը միշտ առողջ մնան և զերծ փսասակար օդից ու եղանակից:

Եվ արագիլը տեղ տվեց նրանց:

Երբ ճնճղուկները ձագ հանեցին, օձը սողաց դեպի բույնը նրանց ձագերն ուտելու: Արագիլը սպանեց այդ օձին և ման էր գալիս, որ ոչնչացնի բոլոր օձերին՝ ճնճղուկների ձագերին փրկելու համար:

Առակս ուսուցանում է կարեկից լինել տկարներին ու թույլերին և ցանկանալ, որ ազատություն վայելեն նրանք:

2

Սիրամարգը իր գեղեցկությունն ամենքին ցուցադրելով գովեստ էր ստանում. և նա մտածեց թագավոր դառնալ: Իմաստուններից ոմանք խրատեցին՝ չխաբվել, ասելով, թե ազգով պետք է թագավոր լինել: Բայց սիրամարգը չէր ուզում լսել նրանց և ցանկանում էր անպատճառ հասնել իր նպատակին: Թռչունների թագավորը լսելով այդ մասին, եկավ ու կոտորեց նրա ձագերին ու ազգատոհմը: Շատերն էլ թևերն ու փետուրները դուրս քաշելով մերկացրին նրան: Այսպիսով, սիրամարգը ոչ միայն թագավոր չդարձավ, այլև զրկվեց իր գեղեցկությունից:

Այսպես ահա, նրանք, ովքեր հրապուրվելով ցանկանում են հասնել անկարելիին, ոչ միայն ձեռք չեն բերում այն, այլև կորցնում են իրենց ունեցածը:

3

Չղջիկները լույսին նայել չեն կարող, մտնում են քարերի ճեղքը կամ պատերի խորշերը, և, որովհետև գարշահոտ են ու վատատես, ցերեկը գունդ ու կծիկ են լինում և գիշերը հարձակվում:

Այդպես են բանսարկուներն ու ավազակները, որոնք արդարության լույսից փախչելով՝ սիրում են խավարը:

4

Էշը գնաց սար կրոնավոր լինելու, բայց վախենալով տեղի դառնությունից ու դժվարություններից, մանավանդ որ խրատում էին, թե ծույլ չպետք է լինի, փախավ այնտեղից ասելով.

– Խառան, խառան…

Այսինքն թե տաք է խառանը, որտեղից եկել էր կրոնավոր լինելու:

5

Ավազակը մի քահանայի բռնելով՝ կամենում էր սպանել նրան: Քահանան ուժ առավ, հաղթահարեց ավազակին և, ինչպես պետք է, սկսեց տանջել նրան:

Ավազակն աղաչում էր և ասում.

– Չէ՞ որ քահանա ես դու և միշտ ասում ես «խաղաղություն ամենեցուն» ու սրա նման շատ բաներ, ուրեմն ինչո՞ւ ես տանջում ու չարչարում ինձ:

– Ո՛վ դու չարագործ, – պատասխանեց քահանան, – ես հենց խաղաղություն պահպանելու համար եմ տանջում քեզ, որովհետև դու չես սիրում խաղաղությունը:

Մխիթար ԳՈՇ

Армянская армия: с древнейших времен до наших дней

«Бог мой, как велико созвездие храбрецов на небосклоне нашей истории. И как ослепительно их сияние. Увенчаны все, у всех есть шрамы славы. В зрачках у них молнии, гнев, горечь. Почти не осталось в мире рода, который бы не узнал силу нашей руки».

Гарегин НЖДЕ

Армянская армия на протяжении многих тысячелетий считалась одной из самых боеспособных на всем Ближнем Востоке. Сегодня славная традиция продолжается, и мы можем сказать, что особой гордостью Республики Армения являются ее вооруженные силы. Сегодня весь армянский народ в двадцать первый раз отмечает день формирования национальной армии независимой Республики Армении.

.АРМИЯ ДРЕВНЕЙ АРМЕНИИ

Официальным документом, из которого мы узнаем о первых воинских формированиях Великой Армении, является царская воинская грамота (Зоранамак). Грамота составлялась в виде четырехгранной таблицы в соответствии с четырьмя воеводствами (воинскими округами) Великой Армении: Северные, Южные, Восточные и Западные врата. Каждое воеводство состояло из 21 или 22 нахарарств с указанием количества их воинских сил. Согласно единственному, сохранившемуся до наших дней Зоранамаку, в раннем средневековье армянская армия при царях Аршакуни состояла из 124 000 воинов, из которых 84 000 составляли нахарарские войска, а 40 000 – царские полки и внутренняя гвардия. При возникновении внешней угрозы, на-харары собирали свое войско и располагали его в составе воинской группы, определенной в Зоранамаке, а в случае необходимости по приказу царя или спарапета оказывали помощь другим группировкам армянского войска.

Самая большая армия в истории Армении была при Сардури II – 355 тысяч человек. Первый эпизод относится к 751-ому году до н.э., когда Сардури II совершил свой знаменитый поход на Лулубум. Вот как об этом говорит сам царь в своей клинописи.

«Величием Бога Халди Сардури, сын Аргишти, говорит: когда Бог Халди мне царство дал (и) я воссел на отцовское царственное место... 92 боевые колесницы, 3.600 верховых лошадей, 352.011 воинов – верховых или пеших;... 121 человека, 10408 коней, 132 мула, 12321 корову, 9036 быков, всего 21357 голов крупного рогатого скота (и) 35467 голов мелкого рогатого скота, 2114 боевых оружий, 1332 лука, 47970 стрел, 1022133 капи ячменя, 111 акарки вина, 86 акарки (и) 7 тируси mankali7 масла, 7079 мин меди».

В 189 году царь Арташес Первый начал войну против Империи Селеквидов. В битве при Магасии армянский царь разгромил Антиоха и стал единоличным правителем своей империи, которая носила название «Великая Армения». Столицей империи стал город Арташат. Армия Арташеса насчитывала более 50 тысяч человек, основной ударной силой была кавалерия, которой командовал Аракс Басунци.

В 94 году Тигран Великий возглавил 15-тысячное войско и направился на завоевание Софены. Битва продолжалась недолго,



Меружан Арцруни ударил по правому флангу Асатриса и уничтожил его, после чего конница добила уже сломленное войско. После этого Тигран сразу начал кампанию против Каппадокии, у Невшихира армия Великой Армении нанесла поражение самой боеспособной части армии царя Ариобарзана, который после этой вести бежал в Рим, оставив пустым Кесарию. На престол Тигран посадил своего соратника и прославленного полководца Гордеуса Ахвирани. Вопрос завоевания остальных территорий был лишь делом времени, в ту эпоху только армия Рима могла оказать сопротивление страшной мощи армии Великой Армянской Империи. В 91 году Тигран начал новую кампанию против Кавказской Албании, армия которой была полностью деморализована и разгромлена еще в битве при Бехе.

Через два года, набрав еще более мощную армию, Тигран наносит поражение Иберии, включив ее в состав своей империи, и начинает подготовку к войне против Парфии. В 89 году армия Тиграна форсирует восточные провинции, сметая все на своем пути, и без больших потерь выходит к городу Ахбак, где проявились таланты Тиграна, как великого стратега. Отдав долины противнику, он велел кавалерии отрезать армию Басхатура от главной дороги к Арбелам. Сначала Тигран велел пехоте отступить, Басхатур пошел в атаку, оставив долину, отрезав главную дорогу, Меружан нанес удар с тыла, а конница довершила уничтожение парфянской армии. В 85 году Парфянский царь вынужден был признать поражение и пойти на мир, по которому он уступил Ме-

➲20

70 лет победе в Сталинградской битве

2 февраля исполнилась 70-я годовщина окончания Сталинградской битвы. По инициативе армяно-российских молодежных организаций в честь 70-летия разгрома немецких войск в Сталинградской битве к Вечному огню у могилы Неизвестного солдата в ереванском парке Победы были возложены цветы.

В МЕРОПРИЯТИИ ПРИНЯЛИ УЧАСТИЕ ВЕТЕРАНЫ ВОВ И ВООРУЖЕННЫХ СИЛ, ИХ ДЕТИ И ВНУКИ, члены молодежных общественных организаций: Ассоциации студентов российских вузов в Армении и Российско-армянского альянса молодежи. Активисты проектов «Наша общая Победа» и «Мы нашей памяти верны» посетили участников войны на дому.

Сталинградская битва предрешила исход Великой Отечественной войны и имела большое значение для судьбы армянского народа. Из 30 тысяч армян – участников боев за Сталинград – 10 тысяч погибли, из них более половины награждены орденами и медалями за подвиги. В Сталинградской битве принимала участие 51-я Гвардейская армянская дивизия, уничтожившая в боях более 8 тысяч гитлеровцев и 340 танков противника. Кроме того, бойцы 51-й дивизии захватили 193 самолета, 91 танк и взяли в плен 5650 немецких солдат и 2 гитлеровских генералов. За проявленный героизм в битве за Сталинград десять армянских бойцов удостоились звания Героя Советского Союза, среди них легендарный летчик Сергей Бурназян.

19⊃

сопотамию, которая была включена в состав Великой Армении, а Тигран Великий принял титул «Царя Царей». Уже в следующем году славная армия Тиграна наносит поражение Сирии, включает в состав Великой Армении Киликию и Коммагену. Нельзя также не упомянуть, что именно армия Великой Армении разгромила египетские войска и позволила Птолемею Двенадцатому вернуть себе трон, взамен новый фараон признал Тиграна владыкой всей Передней и Малой Азии.

Армянская армия не единожды наносила поражение римским легионам. Наиболее яркими были следующие победы:



Тигран II (95 – 38 до н.э.) – битва у Арацани 15.09.68 до н.э., участие в битве у Харан, битва у Зевгмы, конец июня 38 до н.э.

Трдат I (51, 54 – 59, 62 – 75) – битва у Карин, весна 58, битва у Рандея весна 62 (вместе с парфянами).

Вахарш I (114 – 144) – битва в Комагене начало 116 (вместе с парфянами).

Бакур (161 – 164) и спарапет Трдат Багратуни – битва у Элегии весна 161, битва у Антиохии весна 162.

Принц Трдат – битва в Кордуке осень 216, битва у Мцбин 09 – 11.04.217 (вместе с парфянами),

Аршак III (345 – 368) – битва у Мцбин 356.

.АРМИЯ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

28 мая 1918 года на территории Восточной Армении была создана независимая Республика Армения. В тот период армянский народ защищали легендарные полководцы: Андраник Озанян, Гарегин Нжде, Товмас Назарбеков, Мовсес Силикян, Погос и Даниел Бек-Пирумовы, Христофор Араратов, Драстамат Кананян, Епрем Давтян и многие другие. В период с 1916 по 1918 на Ближнем Востоке вел бои армянский легион, их целью было освобождении Киликии. Безусловно, самыми яркими событиями того периода были защита Сюника и Сардарапатская битва.

Оборона Сюника

«Гарегин Нжде продолжил и развил на новом историческом этапе. Точно так же, как вардапет Комитас возродил армянскую музыку, а Торос Тораманян – армянскую архитектуру, так и Гарегин Нжде возродил обет Мамиконянов, назвав его Цегакронутюн и Таронаканутюн. Свою национальную идеологию он обобщил в двух словах, отметив в своей программе Цегакронутюн, что каждый армянин должен быть хозяином своей Родины. Таким образом, названные программы, Бог, Нация, Родина обобщают его идеологию в нескольких словах».

Рафаель Амбарцумян



В конце мая 1920 г. Республика Армения под давлением России вывела армянские воинские части из Арцаха, а 10 августа российско-армянским договором, заключенным в Тифлисе, обязалась вывести войска также из Зангезура. Вспомним, что как раз в

⊃21

Письмо турецкого предпринимателя

На главной странице сайта турецкого движения «Нет расизму и национализму» появилось написанное несколько месяцев назад письмо крупного турецкого предпринимателя с еврейскими корнями, владельца холдинга «Аларко» Исаака АЛАТОНА, адресованное фонду «Экономические и социальные исследования Турции» (TESEV), в котором содержится призыв приложить усилия, направленные на признание Анкарой Геноцида армян.

